

ՏԵՂԵԿԱՏՈՒ

DIEGHIEGAIDOLU

ديغيجادو

Հրատարակութիւն Գահիրէի ՀԲԸՄ-ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ՀԵՌԱԿԱՅ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ
ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ 24 ԱՊՐԻԼ 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական մտորումներ	1
Եգիպտոսի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պատմությունը	3
«Եթե ուզես, կ'ըլլայ» դոկտ. Հ. Ճեպեճեանի	
դասախօսությունը	5
Ուղեւորություն դեպի Արեւմտահայաստան	6
Ի՛նչ իսելացի գաղափար	8
Շնորհաւորանք դոկտ. Ճորճ Ն. Միմոնեանին	11
Վարդ Ալեքսանեանի հետ	12
Կին մը եգիպտահայ կիներուն մէջ	17
Տպաւորություն մը	19
«Հայ Կին» Հայկանոյշ Մառք	23
Ազատ Բառարան	25
Մոռցուած մանկավարժը՝ Զապէլ Զաքարեան	26
Վրիպակ ըսուած փորձանքը	29
Մեր կորուստները	
Հայկ Քիրազեան	30
Արտեմիս Նազարեան	31
Փաթրիք Տեվէճեան	32
Անյոյս Վերջալոյս Սօսի Ներքետեան	32
«Հայաստանը առանց Հայու»	33
Անտիպ գործեր Կոմիտասէն	35
Հետաքրքրական եւ օրինակելի	36

ԽՄԲԱԳԻՐ

Մարուշ Երամեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Տոքթ. Վիգեն Ծիգմեճեան

ՍՐԱԳՐԻՉ

ՎԵՐՍՏՈՒԳԻՉ

Անայիս Ծիգմեճեան

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ՁԵՒԱԽՐՈՒՄ

Շահէ Լուսարարեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Nubar Digital

Գահիրեի ՀԲԸՄ-ի

լուրերուն հետեւեցէք

www.agbuegypt.com

կայքէջով:

Ծանօթացէք «Հայաստան

եւ Հայերը Արաբական

Սամուլին մէջ. 1876-1923»

հաւաքածոյի նկարներուն

www.arminmedia.com

կայքէջով:

«Տեղեկատու»ի յօդուածա-

գիրներուն արտայայտած

կարծիքները անպայման-

օրէն չեն ներկայացներ

Գահիրեի ՀԲԸՄի պաշտօ-

նական տեսակետները:

Թիւ 95 Նոր Զրջան

ԱՊՐԻԼ 2020



ԱՇԽԱՐՀԸ ԵՒ ՊՍԱԿԱՁԵՒԻ ԺԱՀՐԸ

«Տեղեկատու»ի նախորդ համարը՝ թիվ 94-ը նոր լոյս տեսած է ու ես սկսած եմ պատրաստել յաջորդը: Սիրտս սակայն ծանր է յուզումով, վախով, անորոշութեամբ: Ճիշդ հիմա աշխարհի գրեթե բոլոր երկիրները մեկուսացման (**քարանթի-նա**) վիճակի մէջ դրուած են իրենց պետութիւններուն կողմէ: արդիւնքը տակաւին յստակ չէ, իսկ վարակը կը շարունակէ անհակակշռելի մնալ:

Նման համաճարակներ եթէ մեծ երկիրները կը ցնցեն բազմաթիւ առումներով՝ մարդկային եւ տնտեսական կորուստի թէ մնացեալ բոլոր մարզերուն մէջ, փոքր երկիրներուն համար նման համաճարակները կրնան ողբերգական հետեւանքներ ունենալ:

Իտալացիները, որոնք բաւական ուշ եկան տնային կալանքի, որոշեր են իրենց ծանձրոյթը փարատել եւ ընկերային յարաբերութիւններու ախորժակները երգով գոհացնել: ամէն երեկոյ բոլոր քաղաքներուն բոլոր թաղերուն բնակիչները պատշգամները կեցած, կը միանան երգով ինքնաբոլիս կերպով մը, որ կը հաստատէ այս ժողովուրդին խիստ երաժշտական բնոյթը:

Ասոր կողքին ընկերային ցանցերու մէջ կ'երեւին բազմաթիւ իտալացիներու կամ իտալաբնակ հայերու զեկոյցները իրենց կացութեան եւ անոր սկիզբին մասին: Բոլորը կը թելադրեն լրջութեամբ մօտենալ այս վարակին, որ սկզբնական շրջանին այնքան անվնաս կը թուէր:

Այստեղ, Եգիպտոսի մէջ պսակաձեւ ժահրով վարակուողներուն արձանագրուած թիւերը տակաւին մեծ չեն, սակայն նկատի առնելով անոր արագ տարածումը, վտանգը իսկապէս կրնայ շատ լուրջ ըլլալ, մանաւանդ երբ նկատի առ-

նենք մայրաքաղաքին խիտ բնակչութիւնն ու փոխադրամիջոցներուն խիստ խճողուած վիճակը:

Դպրոցներն ու համալսարանները այսօրուրնէ փակ են (15 Մարտ 2020) երկու շաբթուան համար: այդ երկու շաբաթը բաւարար պիտի ըլլա՞յ, թէ պիտի երկարի: այս պահուն յստակ չէ:

Սակայն փորձելով «լէմոնատ պատրաստել դառն լիմոններէն», ինչպէս կ'ըսեն ամերիկացիք, իրենց հազուադէպ իմաստուն խօսքերէն մէկով, մենք ալ կը փորձենք դրական երեւոյթներ փնտռել ոչ թէ համաճարակին, այլ մարդկութեան պարտադրուած այս մեկուսացումին մէջ:

Առաջինը որ կը գրաւէ մեր ուշադրութիւնը՝ մարդ արարածին ընկերային ասուն մը ըլլալու բազմաթիւ անգամներ հաստատուած իրողութիւնն է: սակայն առանձնութեան այս պահերուն կը սկսինք յանկարծ մտածել՝ եթէ այս այսպէս է, ինչո՞ւ ուրեմն մարդիկ այնքա՞ն մեծ ախորժակով իրարու դուեր կը լարեն, իրարու հետ կը գժտուին, զիրար կը փնտվեն ... երբ իրարու պէտք ունին: Թէ ինչո՞ւ երկիրները այդպէս կը վարուին, յստակ է: Բայց մարդի՞կը ...

Մեր ուշադրութեան եկող երկրորդ երեւոյթը մեր ունեցածին ուշադիր չըլլալն է, յարգը չգիտնալն է: Ինչ որ ունինք, աւելին կ'ուզենք, մինչ մեր կողքին գտնուողը իր կեանքը կրնար տալ մեր տեղը ըլլալու համար: Նման մեկուսացումներ սակայն կը ստիպեն, որ ազատօրէն, ուզած պահով տունէն դուրս ելլելու, ուզած տեղը երթալու չափ պարզ, բնական եւ իրաւունք նկատուած բաները ետ մեր սեւեռումին գան եւ ստիպեն, որ անոնց «կարօտով» տառապինք: Ինչպէս Ֆրասիսկոս Պապը իտալացիներուն ուղղուած իր



խօսքին մէջ ըսած էր.

«Այսօր, քնանալէն առաջ մտածեցէք այն օրուան մասին, երբ կրկին փողոց պիտի իջնենք, երբ կրկին պիտի գրկախառնուինք եւ ընտանիքով առեւտուր ընելու հնարաւորութիւնը իրական տօն պիտի թուի»:

«Մտածենք այն օրուան մասին, թէ ինչպէս կրկին կը վերադառնան սուրճը՝ սրճարաններուն մէջ, սիրալիր հանդիպումները, իրարու փաթթուած **սէլֆիները**: Կը մտածենք արդեօք, թէ ինչպէս իրականութիւնը անցեալ կը դառնայ, իսկ մեր բնականօրէն կեանքը անսպասելի եւ հիասքանչ «նուէր» մը կը թուի, եւ կը սկսինք սիրել այն ամէնը, որ մինչեւ երէկ բնական կը թուէր, կը սկսինք գնահատել ամէն բան՝ մեր կեանքին ամէն վայրկեանը՝ ծովափին լողալը, արեւուն ծագիլը եւ արեւմուտքը, կենացներն ու ժպիտները»:

* * *

Այսօր Ճաքոնի մէջ ծաղկած բալենիններուն վրայ ծիւն նստեր է (գարուն է, մի՛ մոռնաք), Հայաստանի ծաղկած ծիրանիները անձրեւին տակ սրսփալով կը թափեն իրենց ծաղիկները, մարդիկ հարիւրներով կը մահանան երկրագունդի տարբեր անկիւններուն մէջ, իսկ գաղթականներու ստուար բազմութիւններ իրենց առօրեայ հացը ունենալու համար, ա՛լ յուսահատ, լռեր են. աղօթքն իսկ չ'օգնէր անոնց:

Գարնան մէջ բնութեան ծիւնն ու մարդկային ծիւնը վատ նշաններ են, ինչպէս ատենին երգած է Կոմիտաս.

Գարուն ա, ձուն ա արել ...

* * *

Տեղեկատուի այս թիւը ձեւով մը նուիրուած է կիներուն եւ մասնաւորաբար

եգիպտահայ կիներուն, նկատի առնելով որ այս տարի, պսակաձեւ ժահիրին պատճառով կիներու նուիրուած միամսեակը՝ Մարտ 8-Ապրիլ 7 գրեթէ չիշուեցաւ:

Մեր նախորդ թիւէն դուրս մնացած էր Հայկանուշ Մառքի «Կին» հանդէսին մասին գրութիւնը, որ այս թիւով կը ներկայացնենք, թէեւ այդ գրութեան առիթը արդէն անցած է:

Անշուշտ ինչպէս ամէն տեղ, մեզի համար ալ այս շրջանին նախատեսուած ձեռնարկները – որոնք բաւական շատ էին – յետաձգուած են կամ ջնջուած ընդհանրապէս: Սակայն մարդիկ կը ջանան իրենց մեկուսացման եւ «տնային կալանքի» ժամերը արդիւնաւետ կերպով անցընել: Հետաքրքրական նախաձեռնութիւն մըն էր Կոկանեան Սրահի Մշակութային Յանձնախումբին կազմակերպած ընդհանուր զարգացումի համացանցային մրցումը, որուն առանցքը Հայաստանն էր եւ հայութեան առնչուած ամէն բան: Այս ձեռնարկին մասին կրնաք կարդալ մեր այս թիւին էջ 8-ին մէջ:

Սուրբ Յարութեան սուրբ շաբթուան եկեղեցական արարողութիւնները կատարուեցան Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, սակայն դռնփակ, որովհետեւ պետական որոշումով այս շրջանին փակ էին բոլոր եկեղեցիներն ու մզկիթները: Բարեբախտաբար ներկայ սարքերուն միջոցով արարողութիւնները սփռուեցան եկեղեցւոյ համացանցային կայքէջով:

Եւ ի վերջոյ, մենք ալ մեր կարգին ունեցանք պսակաձեւ ժահիրի զոհեր, որոնք մեր փոքր ազգին համար մեծ կորուստներ եղան դժբախտաբար:

Յուսալով որ մեր յաջորդ թիւը աւելի բնական պայմաններու մէջ կը գտնէ մեզ բոլորս, առողջութեան մաղթանքներով բարի ընթերցում կ'ըսենք ձեզի:

ԵԳԻՊՏՈՍԻ «ՀՄԸՄ-ՆՈՒՊԱՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ»

Պատմությունը կրնայ «մեռել» գիտություն ըլլալ, սակայն ապրողներուն կ'իյնայ իրենց ազգին, երկրին կամ միության պատմությունը վերականգնելու և ապրեցնել, նուազագույնը ճանաչելով զայն, այդ պատմությունը. որովհետև չգիտությունը այս պարագային կրնայ հասնիլ այնպիսի չափերու, որ շփոթի կը մատնէ անհատին ինքնության գիտակցությունը, ստիպելով որ ան հաւատք ընծայէ տարբեր յերկրանքներու, որոնց ճշդութիւնը ստուգելու միջոց չունի:

Այս մտահոգութեամբ է, որ Կիրակի, 16 Փետրուար 2020-ի երեկոյեան, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ մարզադաշտի սրահէն ներս դասախօսութիւն մը տեղի ունեցաւ, «ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ Պատմութիւնը» խորագրով:

Երեկոյին բացումը կատարեց ՀՄԸՄ-ՆՈՒՊԱՐԻ ատենապետ տիար Ժիրայր Տեփոյեան, որ ներկայացնելէ ետք օրուան դասախօսը որպէս գաղութիս հանրաժանօթ ու սիրուած անհատներէն մէկը, հրաւիրեց զինք իր խօսքը ըսելու:

Դասախօսն էր ՀԲԸՄԻ Գահիրէի մասնաճիւղի ատենապետ տոքթ. Վիգէն Ծիգմէճեան, որ մանրամասնօրէն եւ սահիկներու օգնութեամբ բացաւ ծալքերը այս ակումբի պատմութեան, մանաւանդ Գահիրէի երկու ակումբերուն՝ ՀՄԸՄԻ եւ ՆՈՒՊԱՐԻ միացումին:

Դասախօսը նախ հակիրճ պատմականը ըրաւ Պոլսոյ մէջ գործող մարզական ակումբներուն եւ անոնց ամենէն լայն տարածում ունեցող Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.), որ 1918-ին Պոլսոյ մէջ կը հիմնուի, սակայն 1922 լուծարուելէ ետք, մեծ տարածում կը գտնէ Սփիւռքի գրեթէ բոլոր գաղութներուն մէջ եւ կը դառնայ այսօրուան մեր հզօր միութիւններէն մէկը:

Դասախօսը պատմականը ըրաւ նաեւ



Եգիպտոսի ակումբներուն, որոնք իրենց սկիզբի օրերուն եղած են դպրոցական ակումբներ եւ որոնց առաջինը եղած է Խորէնեան դպրոցի (1854, Պէյն Սուրէյն) մարզական խումբը:

1923 թուականին, Հայկ Ծիգմէճեան Պոլսէն Եգիպտոս փոխադրուելով, Աղեքսանդրիոյ մէջ հիմը կը դնէ ՀՄԸՄԻ, որ 1927-ին իր ակումբը կ'ունենայ նաեւ Գահիրէի մէջ:

ՀՄԸՄԻ մասին իր տեղեկութիւնները Բիւզանդ Թորիկեանի չորս հատորանոց պատկառելի աշխատութենէն քաղած դասախօսը, նոյնքան պրպտում կատարած է ՀԲԸՄԻ Գահիրէի արխիւներուն մէջ, ուր կը պահուին կարելոր եւ մանրամասն տեղեկութիւններ տեղւոյն ակումբներուն, մասնաւորապէս այս երկու ակումբներուն միացումին մասին:

Յարգելի դասախօսը նշել տուաւ, թէ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ գործող Հ.Մ.Ը.Մ. Արարատ եւ Հ.Մ.Ը.Մ. Կամք ակումբները իրենց սկիզբի շրջանին կը ճանչցուէին որպէս Արարատ եւ Կամք մարզական ակումբներ եւ թէ միայն աւելի ուշ է, որ Հ.Մ.Ը.Մ.-ը աւելցուած է անոնց անուններուն:

Սրահը լեցուցած ներկաները գրեթէ երկու ժամերու ընթացքին հետաքրքրութեամբ հետեւեցան յարգելի դասախօսին, որ երկար եւ խիտ պրպտումներու հիման



վրայ, ՀԲԸՄԻ նորահաստատ արխիվատան հարստութենէն որոշ նիւթեր ներկայացնելով հաստատեց, թէ երկու ակումբները, իրենց իսկ փափաքով միանալէ ետք, 8 Փետրուար 1954-ին համաձայնագիր մը ստորագրած են, ուր յստակօրէն ըստած է.

«Հ.Մ.Ը.Մ.ի Հելիոպոլսոյ եւ Աղեքսանդրիոյ մասնաճիւղերը եւ ՆՈՒՊԱՐԻ Գործ. Ժողովը կ'որոշեն այսու Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան հովանաւորութեան ներքեւ բոլորովին միանալով կազմել մարզական միակ ընկերակցութիւն մը, որ պիտի կոչուի Հ.Մ.Ը.Մ.-ՆՈՒՊԱՐ» եւ այլն:

Տիար Պերճ Թերզեան, պատուոյ ատենապետ Եգիպտոսի ՀԲԸՄԻ Շրջանակային Յանձնաժողովին եւ Գահիրէի ՀԲԸՄԻ Տեղական մասնաճիւղին, հակիրճ բայց մանրամասն տեղեկութիւններ

տուաւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ մարզարանի հողին գնման, Պօղոս Փաշա Նուպարի Ժառանգներուն հետ համաձայնութեան եւ ստեղծուած բարդութիւններուն մասին, բաներ, որոնք շատերու համար ամբողջովին նորութիւն էին եւ կը հերքէին այն թիւր կարծիքը, թէ մարզարանին հողը նուէր տրուած է միութեան:

Դասախօսութենէն ետք շատեր, մանաւանդ երիտասարդներ մօտեցան յարգելի դասախօսին եւ իրենց հարցումները ուղղեցին, ինչպէս նաեւ կարծիքներ յայտնեցին ստեղծուած այն կացութեան հանդէպ, որ կասկածի տակ կը դնէ պատմական ճշմարտութիւն մը:

Իրապէ՛ս գոհացուցիչ երեկոյ մը բոլոր ներկաներուն համար, որոնք սրահէն հեռացան իրենց միութեան պատմութեամբ քիչ մը աւելի հարուստ եւ շատ հպարտ:



«ԵԹԷ ՈՒՋԵՍ, Կ'ԸԼԼԱ՛Յ»

Օգտուելով դոկտ. Հրայր Ճեպեճեանի քաղաքս գտնուելուն պատեհ առիթէն, Ուրբաթ, 7 Փետրուար 2020-ին Գահիրէի Ազգային Առաջնորդարանը հանդիպում մը կազմակերպած էր անոր հետ, «Սփիւռքահայ իրավիճակներ, ազգային-մշակութային ինքնութեան եւ մայրենի լեզուի պահպանում» խորագրով:



Երեկոյին բացման խօսքը կատարեց եւ դասախօսին մասին մանրամասն ծանօթութիւններ տուաւ գաղութիս երէց մտաւորականներէն, Եգիպտոսի հայոց պատմութեան նուիրուած իր աշխատասիրութիւններով եւ ուսումնասիրութիւններով հանրածանօթ ազգային, տոքթ. Սուրէն Պայրամեան, որմէ ետք դոկտ. Ճեպեճեան իր խօսքը հարցումով մը սկսաւ.

«Ի՞նչ կը հասկնանք մշակոյթ ըսելով» եւ մանրամասնօրէն խօսեցաւ նախ այդ հասկացողութեան մասին եւ ըսաւ.

«Մշակոյթը պարարուեստ, երգարուեստ, գեղարուեստ, գրականութիւն եւ այլ արուեստներ ըլլալու կողքին է՝ մանաւանդ գաղափար, կեցուածք, լեզու, վարուելակերպ եւ կազմակերպչական կառոյց»:

Ապա մանրամասնեց մշակոյթին իմաստն ու մանաւանդ դերը Սփիւռքի համար եւ բազմաթիւ օրինակներ բերելով իր ճամբորդութիւններէն, պատմեց տարբեր գաղութներու մասին, որոնք այսօր եթէ ա՛լ **հայախօս** չեն, բայց կը շարունակեն **հայկական** մնալ, իրենց հայու ինքնութիւնը խորապէս զգացող եւ ապրող հաւաքականութիւններով:

Տպաւորիչ էր մանաւանդ խօսքը Եթովպիոյ միայն 70 անդամներ ունեցող հայ գաղութին մասին, զոր «հերոս» անուա-

նեց, որովհետեւ այդ 70 ոչ հայախօս անդամներուն ապրումները այնքան զօրաւոր են, որ կրնան նոյնիսկ առանց կղերի պատարագ մատուցել եւ առկայծ պահել կապը իրենց արմատներուն հետ:

Դոկտ. Ճեպեճեանի դասախօսութիւնը վերջ գտաւ դրական նօթով մը, երբ թելադրեց ներկաներուն ան-

պայմանօրէն հետեւիլ երեք ուղիներէ բաղկացած ճամբու մը, որ կրնայ ապահովել մեր գալիքը.

Ա. Պատմել ցեղասպանութիւնը ամէն տեղ եւ ամէն առիթով, որովհետեւ տակաւին ամբողջ աշխարհը չէ, որ գիտէ 1915-ի արհաւիրքն ու անոր մանրամասնութիւնները.

Բ. Հպարտ ըլլալ մեր հայութեամբ՝ հայրենիքով, մշակոյթով, լեզուով, ճարտարապետութեամբ եւ արուեստներով, որոնք իրապէ՛ս գեղեցիկ են եւ տպաւորիչ.

Գ. Դրականութիւն սրսկել նոր սերունդին:

Իր խօսքը աւարտելէ ետք դոկտ. Ճեպեճեան նուիրեց իր երկրորդ գիրքը եւ մակագրեց զանոնք ներկաներուն:

Գաղութիս Բարեջան Առաջնորդ Տ. Աշոտ Եպս. Մնացականեան փակման իր խօսքին մէջ շեշտեց՝ «Եթէ ուզես, կ'ըլլայ», ակնարկելով այն իրողութեան, որ մեր ինքնութեան պահպանումը վերջին հաշուով միայն ու միայն կախեալ է մեզմէ, իւրաքանչիւրէս:

Հիւրասիրութեան շուրջ ներկաները շարունակեցին զրուցել այն էական հարցերուն շուրջ, որոնք թէեւ հմտօրէն ներկայացուեցան, սակայն յստակ պատասխաններ չունեցան, ինչպէս է պարագան գրեթէ բոլոր էական հարցադրումներուն:



«ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԱՍՏԱՆ»

Պերճ Հալաճեանի դասախօսութիւնը

Իւրաքանչիւր սփիւռքահայ չի կրնար զսպել իր յուզումը, երբ խօսքը կը վերաբերի Արեւմտեան Հայաստանի մեր գաւառներուն եւ քաղաքներուն: Վերջին քանի մը տարիներուն շատեր այցելած են այդ տարածքները եւ անմոռանալի ու ծանր յուշերով վերադարձած:

Սակայն 2019 թուականի Մայիս-Յունիս ամիսներուն Համահայկական Խաղերուն Միջազգային կոմիտէին կատարած ուխտագնացութիւնը դէպի Արեւմտահայաստան, տարբեր տարողութիւն ունեցած է:

Այդ մասին էր, որ տիար Պերճ Հալաճեան, մէկը Համահայկական Խաղերու Համաշխարհային կոմիտէի հիմնադիր-անդամներէն, ելոյթ ունեցաւ Շաբաթ, 14 Մարտ 2020-ի երեկոյեան, ՀԲԸՄի Գահիրէի մասնաճիւղին Սաթենիկ Չագըր Մշակութային սրահէն ներս, իր խօսքը լուսանկարներով եւ տեսերիզներով համեմելով:

Երեկոյին բացումը կատարեց ՀԲԸՄի Գահիրէի մասնաճիւղի ատենապետ տորթ. Վիգէն Ճիզմէճեան, որ բարի գալուստի իր խօսքէն ետք ներկայացուց դասախօսին կեանքն ու գործունէութիւնը:

Համահայկական Խաղերու Համաշխարհային կոմիտէն երկու նպատակ ունեցած է այս այցելութեան համար. նախ խաղերուն երեք ջահերէն առաջինը վառել Մուսա լեռան ստորոտէն՝ Վագրճ գիւղէն եւ յետոյ՝ հրաւիրել Վանի, Իգդիրի, Վագրճի եւ Մուշի մէջ տակաւին ապրող հայ մարզիկները, մասնակցելու Համահայկական 7-րդ Խաղերուն:

Առաջին անգամ է որ նման դէպք մը կ'արձանագրուի սփիւռքահայ պատմութեան մէջ՝ ուղիղ թռիչքով Երեւանէն հասնիլ Վան (նախապէս առնուած յա-



տուկ հրամանով), Հայաստանի վերջին՝ 12-րդ մայրաքաղաքէն հասնիլ առաջին մայրաքաղաքը՝ Վան, հանդիպիլ Վանի, Տիգրանակերտի եւ Վաքըֆի քաղաքապետներուն, վառել խաղերուն ջահը եւ զայն բերել մինչեւ Ստեփանակերտ (Արցախ), Համահայկական եօթներորդ խաղերուն բացումը կատարելու համար:

Խումբը բաղկացած է Համահայկական Խաղերու Համաշխարհային կոմիտէի հինգ անդամներէ, երկու պատմաբաններէ՝ փրոֆ. Աշոտ Մելքոնեան (ԳԱԱ պատմութեան բաժնի տնօրէն) եւ փրոֆ. Մինասեան, թարգմանիչէ մը, Ազգային Ժողովի անդամներէ, թղթակիցներէ, արուեստաբաններէ եւ բժիշկէ մը. երգչուհի Սիպիլ ինք եւս մաս կազմած է այս խումբին: Պատուիրակութիւնը կը գլխաւորէր տիար Իշխան Զաքարեան, իր հետ ունենալով փոխ-ատենապետներ տեարք Ալպէր Պոյաճեան, Ստեփան Տէր Պետրոսեան, Ռուլան Շառոյեան եւ Պերճ Հալաճեան:

Իր խօսքին ընթացքին յարգելի դասախօսը ըսաւ.

«Այցելեցինք մեզի համար մեծ նշանակութիւն ունեցող այս հողատարածքը, որ կորսնցուցած ենք զանազան պատճառներով: Պատկերացուցէք մեր ապրումները, երբ կը տեսնէինք փլատակ եկեղեցիներ, առանց խաչի, իրենց հայկական անունները փոխած բերդեր, քանդուած ամրոցներ ... Միայն այդ հողերուն վրայ կենալով է որ կը զգաք թէ մենք, հայերս ի՞նչ հզօր ժողովուրդ եղած ենք: Մեր բոլոր մտաւորականներն ու ճարտարապետները այս հողերուն վրայ ապրած, ստեղծագործած եւ յետոյ քարոտուած եւ ջարդի ենթարկուած են. այսօր յառաջդիմած Թուրքիոյ մէջ կը զգաք անոնց ներ-



կայությունը եւ ազդեցությունը: Հակառակ անոր, մեր դարաւոր թշնամին չ'ուզեր ճանչնալ Սեւրի դաշնագիրը, որ քանի մը օրէն պիտի բոլորէ հարիւր տարին (Մարտ 1920-2020)»:

Դասախօսը ապա անդրադարձաւ, թէ ինչպէս Ցեղասպանութեան հարիւր ամեակին առիթով որոշուած է տակաւին Արեւմտահայաստանի հողերուն վրայ ապրող հայ մարզիկներու մեծ թիւ մը հրաւիրել Համահայկական Խաղերուն. Սասունէն եւ Տիգրանակերտէն մեծ թիւով մարզիկներ մասնակցած են հարիւրամեակի խաղերուն, որոնք թէեւ հայերէն չէին գիտեր կամ քիչ գիտէին, բայց հպարտ էին իրենց պատկանելիութեամբ: Այդ մարզիկները մեծ յուզումով Ծիծեռնակաբերդ այցելած են: Պէտք է նշել նաեւ, որ այդ քաղաքներուն քաղաքապետները մասնակցած են ՀՀ նախագահի ճաշկերոյթի հրաւերին եւ եղբայրութեան բաժակաճառեր խօսած:

Դասախօսը մանրամասնօրէն ներկայացուց նաեւ իրենց ուղեւորութեան ճանապարհը այսպէս.

Սկսելով Մայիս 30-ին Երեւանէն Վան, Աղթամար կղզի, Իգտիր, Վազրֆ, Այնթապ (ոչ ամբողջ խումբը), Սիսի միջնաբերդ, Ատանա, Անգարա, Վան, Մուշ, Պիթլիս, Նոր Շէն գիւղ (Տարօն), Գէորգ Չաւուշի գերեզման, Առաքելոց վանք, Անի քաղաք, Կարս, Ախալքալաք, Կիւմրի, եւ ի վերջոյ Յու-

նիս 6-ին Երեւան (տեսնել կից քարտեզը):

Այս բոլոր այցելութիւններուն ընթացքին տեղւոյն գիւղապետերը կամ քաղաքապետները, որոնք յաճախ քիւրտեր եղած են, խիստ սիրալիւր ընդունելութիւն ցուցաբերած են պատուիրակութեան եւ յաճախ ճաշասեղաններով կամ ճոխ ընթրիքով պատուած զիրենք:

Աւելի քան մէկ ժամ տեւած դասախօսութեան ներկաները հետաքրքրութեամբ, հաճոյքով եւ յաճախ յուզումով հետեւեցան:

Դասախօսը իր ելոյթը աւարտեց հետեւեալ խօսքերով.

« Չեմ կրնար համոզուիլ, թէ այս գեղեցիկ բնութիւնն ու բազմաթիւ յուշարձանները մաս կը կազմէին մեր մեծ Հայաստանին, բայց պառակտումի եւ այլ պատճառներով կորսնցուցած ենք »:





Տակաւին տունն ենք

ԻՆՉ ԽԵԼԱՑԻ ԳԱՂԱՓԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՄ

Կոկանեան Սրահի Մշակութային Յանձնախումբը խելացի գաղափարը ունեցած էր առ-
ցանց հարցամրցում մը կազմակերպելու, գաղութին գլխաւորաբար երիտասարդներուն հա-
մար, նախ անոնց օգտակար եւ շինիչ զբաղում մը ապահովելու, ապա զիրենք հայկական գի-
տելիքներով հարստացնելու ազնիւ մղումով:

Սկիզբէն յայտարարուած էին հարցամրցումին պայմանները,

-Տեղի պիտի ունենար Շաբաթ, Ապրիլ 4-ի երեկոյեան:

-Պիտի տեւեր ժամը ութէն ինը:

-Կապը միայն վերջին պահուն պիտի յայտարարուէր Կոկանեան Սրահի կայքէջին վրայ:

-60 հարցումներ եւ անոնց երեք պատասխանները – որոնցմէ մին միայն ճիշդ պատասխանն
է անշուշտ – պէտք է ամբողջացուէին մէկ ժամուան ընթացքին:

-Մասնակցելու համար պէտք էր պատասխանին վրայ երեւոյց տփիկներուն մէջ գրել անուն-
մականուն, ապա ուղղակի պատասխանին վրայէն լուսանկարել ինքզինք եւ մուտք գործել:

Քսաներկու մասնակցողներէն առաջին տեղը գրաւած է տիկին Ասիա Սիմոնեան, իսկ երկ-
րորդ եւ երրորդ տեղերը յաջորդաբար տիկիններ Սօսի Յակոբեան եւ Սեւան Տրդատեան:

Պէտք է ըսել, որ մասնագիտական ձեւով եղած դասաւորումը կը հեշտացնէր մասնակցու-
թիւնը:

Իրենց հետաքրքրականութեան համար եւ մեր ընթերցողները եւս մասնակից դարձնելու
համար այս հետաքրքրական հարցամրցումին, այստեղ կը ներկայացնենք բոլոր հարցումնե-
րը, իրենց ճիշդ պատասխաններով:

1. Ո՞վ է հայոց Պատմահայրը:

**Մեսրոպ Մաշտոց
Մովսէս Խորենացի ✓
Խրիմեան Հայրիկ**

4. Հետեւեալներէն ո՞ր կառոյցին նկարն է:

**Պոլսոյ Կեդրոնական վարժարան
Մոսկուայի Լազարեան ճեմարան
Էջմիածնի Գէորգեան ճեմարան ✓**

2. Հայկական առաջին ազգային օփերան
է՝

**Ալմասր
Անուշ ✓
Արշակ Բ.**

5. Ո՞ր լոյս տեսած է հայերէն առաջին
տպագիր գիրքը

**Պոլիս
Թիֆլիս
Վենետիկ ✓**

3. Ո՞վ է աշխարհաբարով գրուած առա-
ջին վէպին՝ “Վերք Հայաստանի”-ի հեղի-
նակը:

**Շիրվանզադէ
Խաչատուր Աբովեան ✓
Րաֆֆի**

6. 1909-ի Ատանայի ջարդերու զոհերուն
թիւը՝

**50,000
30,000 ✓
100,000**

7. Հայաստանի Հանրապետութեան տա-



րաժքով ամենամեծ մարզն է՝
Լոռի
Գեղարքունիք ✓
Սիւնիք

8. Ո՞վ ըսած է
“Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ
անմահութիւն է”:
Մեսրոպ Մաշտոց
Եղիշէ Պարմիչ ✓
Սահակ Պարթեւ

9. Հետեւեալներէն ո՞վ Եգիպտոս չէ ծնած:
Գոհար Գասպարեան
Յակոբ Յակոբեան
Վահան Թէքէեան ✓

10. Որո՞ն նկարն է:
Ֆրիդրիոֆ Նանսէն
Արմին Վէկներ ✓
Ռոմէլ

11. Հայ ո՞ր քիմիագէտի ստեղծած բա-
ղադրամիջոցով առաջ եկած է ամերիկե-
ան տոլարի կանաչ գոյնը:
Սարգիս Արարապեան
Ռոպէրթ Նալպանյան
Քրիսթոֆըր Տէր Սերոբեան ✓

12. Ի՞նչ կը կոչուի հետեւեալը:
Խնկաման
Քշոց
Բուրվառ ✓

13. Որո՞ն անունով կը կոչուի Երեւանի
պետական բժշկական համալսարանը:
Անանիա Շիրակացի
Գրիգոր Տաթեւացի
Մխիթար Հերացի ✓

14. Որո՞ն կը պատկանի հետեւեալ
կտաւը:
Արշիլ Կորքի
Մինաս Աւերիսեան ✓
Գէորգ Բաշինջաղեան

15. Հայաստանի Հանրապետութիւնը ե՞րբ
պաշտօնապէս ընդունուեցաւ ՄԱԿ. էն ներս:

2 Հոկտեմբեր 1991
2 Մարտ 1992 ✓
2 Ապրիլ 1993

16. Հետեւեալներէն որո՞ն արձանը չկայ
Երեւանի Մատենադարանին առջեւ:
Ֆրիկ
Գրիգոր Նարեկացի ✓
Թորոս Ռոսլին

17. Աշխարհահռչակ թէնիս խաղցող Անտ-
րէ Ակասին ո՞ր թուականի ողիմպիական
խաղերուն աշխարհի ախոյեան եղաւ:
1992
1996 ✓
2000

18. Հետեւեալներէն ո՞վ սպաննուեցաւ 19
Յունուար 2007-ին:
Վահագն Տապրեան
Գուրգէն Մարգարեան
Հրանդ Տինք ✓

19. Այս տարի հայ ո՞ր բեմադրիչին 100-ա-
մեակն է:
Սերկէյ Փառաջանով
Հենրիկ Մալեան
Հանրի Վերնոյ ✓

20. Ո՞ր թաղուած էր Զօրավար Անդրա-
նիկ, աճիւնը Երեւանի Եռաբլուր պանթե-
ոն փոխադրելէն առաջ:
Պոլիս/ Շիշլիի գերեզմանատուն
Ֆրէզնօ/ “Արարապ” գերեզմանատուն
**Փարիզ/ “Փէր. Լաշէզ” գերեզմանա-
տուն ✓**

21. Ո՞վ է “Սեւ Աչերէն Շատ Վախեցիր” եր-
գին խօսքերուն հեղինակը:
Սմբատ Շահազիս
Րաֆֆի
Աւերիք Իսահակեան ✓

22. Ո՞ր կը գտնուի հայկական ատոմային
էլէկտրակայանը:
Բիրական
Մեծամօր ✓
Օշական



շայի Հեռագրերը...

**Առնուլտ Թոյնպի
Թանէր Աքչամ ✓
Հենրի Մորկէնթաու**

39. Որո՞ն նկարն է:

**Գաբրիէլ Սարգսեան
Հայկ Մարտիրոսեան
Լեւոն Արոնեան ✓**

40. Որո՞ն անունով կը կոչուի
Հայաստանի օփերայի եւ Պալէթի Ազ-
գային Ակադեմիական թատրոնը:

**Արամ Խաչատուրեան
Ալեքսանյոր Յարութիւնեան
Ալեքսանյոր Սպենդիարեան ✓**

41. Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին
մէջ գտնուող յուշասիւնը ի՞նչ կը կոչուի:

**Վերածնունդ Հայ Ժողովուրդ
Վերածնունդ Հայաստան ✓
Վերածնունդ Հայրենիք**

42. Ո՞վ է “Կիլիկիա” երգին խօսքերուն
հեղինակը:

**Մկրտիչ Պէշկեթաշլեան
Նահապետ Ռուսինեան ✓
Ռաֆայէլ Պարկանեան**

43. Ո՞ր հայ գրողը 1908-էն 1915 թուական-
ներու ընթացքին թուրքիոյ ազգային ժո-
ղովի պատգամաւոր էր:

**Սիամանթօ
Ռուբէն Սեւակ
Գրիգոր Զօհրապ ✓**

44. Ո՞վ է միակ կին մտաւորականը որուն
անունը ընգրկուած էր երիտթուրքերուն
պատրաստած հայ մտաւորականներու
ձերբակալման ցանկին մէջ:

**Սիպիլ
Զապէլ Եսայեան ✓
Մելինէ Մանուկեան**

45. Արմէն Սարգսեանը Հայաստանի
Հանրապետութեան քանի՞երորդ նախա-
գահն է:

3-րդ

4-րդ ✓

5-րդ

46. Հետեւեալներէն ո՞րմէկը Յակոբ Յա-
կոբեանի ինքնակենսագրականն է:

**“Գրառումներ Իմ Կեանքից”
“Սիլիկիարի Պարտէզները”**

**“Ու Մերթ Խնդաց ու Մերթ Լացաւ Իմ
Հոգիս” ✓**

47. Հետեւեալներէն ո՞րմէկը հայկական
ամենահին համալսարանը կը համարուի:

**Տաթևի համալսարանը
Սանահինի համալսարանը
Գլաճորի համալսարանը ✓**

48. Հետեւեալներէն ո՞րմէկուն նկարն է:

Գանձասարի վանքը

**Շուշիի Ս. Ղազանչեցոց եկեղեցին ✓
Դադիվանքը**

49. Ի՞նչ տեղի ունեցաւ 1666 թուականին:

**Հայերէն առաջին թերթը լոյս տեսաւ:
Հայերէն առաջին տպագիր գիրքը լոյս
տեսաւ:**

**Հայերէն առաջին տպագիր Աստուածա-
շունչը լոյս տեսաւ: ✓**

50. Հայ ո՞ր գրողի վէպերէն մէկուն հիման
վրայ պատրաստուած է
հայկական “Կտոր Մը Երկինք” ֆիլմը:

**Վազգէն Շուշանեան
Խաչիկ Դաշտենց
Վահան Թորթովենց ✓**

51. Որո՞ն նկարն է:

**Ալեք Մանուկեան
Վիքթոր Համբարձումեան ✓
Յովհաննէս Ադամեան**

52. Կոմիտաս Վարդապետի հիմնած 300
հոգիէ բաղկացած երգչախումբը կը կոչո-
ւէր՝

**Քնար
Գուսան ✓
Շիրակ**



53. Ո՞վ կատարեց Արշիլ Կորքիին դերը “Արարատ” ֆիլմին մեջ:

**Սիմոն Աբգարեան ✓
Տէյվիպ Ալփէյ
Վիլէն Գալստեան**

54. Որո՞ն կը պատկանի այս կտաւը:

**Յակոբ Յովնաթանեան
Վարդգէս Սուրենեան ✓
Փանոս Թերլեմէզեան**

55. Հետեւեալներէն ո՞րմէկը Հայոց Ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանչցող առաջին երկիրն է:

**Ուրուկուէյ ✓
Հունկարիա
Ֆրանսա**

56. Հետեւեալ երգերէն ո՞րմէկը Էտկար Յովհաննիսեանին չի պատկանիր:

**Արփա-Սեւան
Գարուն Երեւան ✓
Էրեբունի-Երեւան**

57. Որո՞ն կը պատկանին հետեւեալ տողերը:

Ինծի կ’ըսեն —«միշտ տխուր ես».—
«Ի՞նչպէս չըլլամ, մէկիկ մէկիկ
Թօթափեցան գլխուս աստղիկք...
Արշալոյս մը չ’անցաւ սրտէս»:

**Միսաք Մեծարենց
Պետրոս Դուրեան ✓
Մարթէոս Զարիֆեան**

58. 2016-ի ողիմպիական խաղերուն հայ ո՞ր ըմբշամարտիկը ոսկէ մետալ շահեցաւ:

**Արթուր Այվազեան
Տիգրան Գէորգեան
Արթուր Ալեքսանեան ✓**

59. Ո՞վ է Տիանա Աբգարը
**Առաջին կին աստղագէտն է
Առաջին կին դեսպանն է ✓
Առաջին կին լուսանկարիչն է**

60. “Հազար ու Մէկ Եկեղեցիներու Քաղաք”ն է՝

**Կարս
Անի ✓
Վան**

ՇՆՈՐՀԱԽՈՐԱՆՔ

Մեր սրտաբուլի շնորհաւորութիւնները դուկտ. Ճորճ Նուպար Սիմոնեանին, որ անգամ մը եւս կը բարձրացնէ եգիպտահայոց վարկը երկրին մէջ եւ պետութեան առջեւ, արժանաւորապէս նշանակուելով Գահիրէի Ալ Ահրամ Գանատական Համալսարանի ձեւաւորման եւ ստեղծագործական արուեստներու բաժնին աւագ ուսուցչապետ (dean):

Դուկտ. Ճորճ Սիմոնեան կը վարէ Եգիպտոսի Թուային Տպագրութեան Յանձնաժողովի նախագահութիւնը եւ անդամ է Ալ Ամիրիա տպագրատուններու վարչական խորհուրդին, Եգիպտոսի



դրոշմաթուղթերու Կոմիտէին եւ Եգիպտոսի համալսարաններու բարձրագոյն խորհուրդին արւեստի համալսարաններու բաժնին:

Այս բոլորին կողքին դուկտ. Ճորճ Սիմոնեան նաեւ նուիրուած է համայնքին, որուն Քաղաքական Պատկառելի Ժողովին անդամ է, ինչպէս եւ երկարամեայ անդամ է ՀԲԸՄԻ Գահիրէի վարչութեան:

Եգիպտահայ համայնքը իրապէ՛ս հպարտ է իր արժանաւոր զաւկին բազմաթիւ յաջողութիւններով:

«Տ»



ՎԱՐԴ ԱԼԵՔՍԱՆԵԱՆԻ ՀԵՏ

Եգիպտահայ համայնքի նահապետներէն, Էրզրումցի ծնողներու զաւակ, կեանքը յեփսակողմի դռներէն սկսած եւ այսօր առաջնակարգ դիրք գրաւող Վարդ Ալեքսանեանի անունը ծանօթ է գրեթէ բոլոր եգիպտահայերուն, սակայն քիչեր են որ գիտեն մանրամասնութիւնները այդ կեանքին, որ կը բեւեռուի հայրենիքին եւ գաղութին շուրջ, կը թարգմանուի փարբեր եւ բազմա-

զան գործունէութեամբ, որուն կարկինը լայն բացուած է՝ մշակութայինէն մինչեւ մարզական եւ բարեսիրական աշխատանքները:

Այս բարեսիրական աշխատանքներուն ծիրէն ներս պէտք է յիշել գոնէ երկու դէպք. առաջինը՝ Հայաստանի անկախութեան առաջին փարիներուն, երբ երկիրը կը կենար սովի վտանգին առաջեւ, Վարդ Ալեքսանեան կը նուիրէ հարիւր հազար փոլար, ցորենի ֆոնտին: Նոյն շրջանին Ս. Էջմիածնին կատարած իր իշխանական նուիրատուութեան համար, Ամենայն Հայոց Կաթողիկոսը կոնդակով մը զինք կը գնահատէ: Տակաւին վերջերս, երբ Հայաստանէն խումբ մը զբօսաշրջիկներ հասած էին եգիպտական Հուրկափա ծովափը, բայց խաբուած ըլլալով իրենց պոռոյրը կազմակերպող կողմէն, չէին կրնար վերադառնալ, Ալեքսանեան քառասուն հազար փոլար նուիրատուութեամբ մը կ'օգնէ, որ անոնք վերադառնան իրենց երկիրը՝ Հայաստան:

Համահայկական խաղերուն համար պատրաստուած բաժակը մինչեւ այսօր կը պատրաստուի եւ կը տրամադրուի Վ. Ալեքսանեանի կողմէ (տեսնել լուսանկարը):

Եգիպտահայ պասքէթ-պոլի բոլոր մրցումներուն բոլոր մեդալները, բոլոր ակումբներուն համար անխփիր կը տրամադրուին Վ. Ալեքսանեանի կողմէ:

Պէտք է նշել նաեւ, որ ո՛չ մէկ առիթով – նոյնիսկ այս հարցազրոյցին ընթացքին, Ալեքսանեան պատմած է նման մանրամասնութիւններ: Զինք ճանչցողները գիտեն, որ որքան ալ արտասովոր խառնուածքի փէր, Ալեքսանեանի գլխաւոր յարկանիշերէն մէկը իր համեստութիւնն է, ըրածով երբեք չյոխորտալու կեցուածքը:

Այսօր քիչեր գիտեն, որ Վարդ Ալեքսանեան յաճախ ելոյթ ունեցած է գաղութիս մէջ դասախօսութիւններով եւ իր ներդրումը ունեցած փեղական թէ համահայկական մարզական կեանքէն ներս:

Մեր հանդիպումը նպատակ ունի բանալ ծալքերը Վ. Ալեքսանեանի կեանքին եւ գործունէութեան, նաեւ օգտուիլ անոր փորձառութենէն:



Տեղեկատու - Գիտենք որ արտասովոր, ոչ սովորական խառնուածքի մը եւ կենսաձեւի մը տէր էք. ուրկէ՞ կու գայ ասիկա, աւանդապահ համայնքի մը մէջ ծնած-մեծցած եւ հոն ապրելուն հակառակ:

Վարդ Ալեքսանեան – Առաջին՝ ես Պոլսոյ մեծ ընտանիքի մը թոռն եմ, հօրենական մեծ մօրս կողմէ՝ Ադամեան: Մանկութենէս զգացած եմ, որ սուր նայուածք, դիտելու եւ դատելու կարողութիւն ունիմ. այդ է պատճառը, որ 16 տարեկանիս դպրոցը ձգեցի, որովհետեւ նշմարեցի, որ դպրոցէն ներս աղքատներուն հանդէպ վերաբերմունքը վատ է, իսկ հարուստներուն հանդէպ շատ լաւ կեցուածք կայ: Ճիշդ վեց ամիս ետք սկսայ ինքնաշխատութեամբ ինքզինքս զարգացնել անձնական դասերով եւ գիշերային դասընթացքներով: Հայրս զարմացած էր՝ «Վարդ, դպրոցը բան չսորվեցար, հիմա սկսեր ես դասերո՞ւ հետեւիլ»: Ինծի համար սակայն այդ էր ճիշդ ժամանակը եւ մինչեւ այսօր դասընթացքներու կը մասնակցիմ եւ նորութիւններու կը հետեւիմ: Դատողութիւնս շատ զօրաւոր է. նաեւ՝ ինչ որ որոշեմ ընել, կ'ընեմ: Բան մը ընելու համար երկար կը մտածեմ, իսկ որոշումներս կ'ամ շատ արագ կ'առնեմ, կամ՝ շատ դանդաղ: Օրինակ՝ Նուէրը (Ալեքսանեանի 62 տարիներու կողակիցը՝ Նուէր Յագոյեան) մէկ անգամ տեսայ, կէս ժամ խօսեցայ հետը եւ ըսի՝ «Դուն ինծի յարմար ես»: Ըսաւ՝ «Ինչ ըսել կ'ուզես», Ըսի՝ «Պիտի հասկնաս շուտով»: Ուրիշ որոշումներ երկար մտածելէ ետք առած եմ եւ որոշումս կայացնելէ առաջ ծոմ պահած եմ:

Տ. Ինչ է ծոմ պահելու դերը որոշումներ կայացնելու մէջ:

Վ. Ա. Կը մաքրուիս եւ առնելիք որոշումդ մաքուր կ'ըլլայ:

Տ. Բայց երբ ծոմ պահես, անօթութիւնը կրնայ կեդրոնացումդ խանգարել:

Վ. Ա. Միայն երեք օր. անկէ վերջ կ'օգ-

նէ, որովհետեւ մարմնին բեւեռումը (polarity) կը փոխուի:

Տ. Ինչ է Ադամեան ընտանիքին դերը, ձեր կազմաւորումին մէջ:

Վ. Ա. Կը կարծեմ թէ հայրս էր, որ զիս ուղղեց դէպի այն մարդիկը, որոնցմէ կրնայի օգտուիլ. օրինակ Ճանիկ Չագրըրը կար, Տրենց Մարգարեանը, Նասիպեանը կար, որոնց կ'երթայի սրսկումներ ընելու. հայրս, որ Օսմանեան բանակին մէջ բժիշկի օգնական եղած է, սորվեցուցած էր ասիկա ինծի ... Շատ ուրախ կ'ըլլայի նոնց հանդիպելով, մանաւանդ Կիրակի օրերը, երբ անոնք ժամանակ կ'ունենային հարցումներուս պատասխանելու եւ հետաքրքրութիւններս գոհացնելու: Ատիկա ինծի շատ օգնած է ... օրինակ՝ պարոն Ճանիկ Չագրըր օր մը ինծի ըսաւ, որ կարդամ ֆրանսերէն Historia¹ թերթը եւ ըսաւ՝ «Ջանա՛ որ միշտ բարձունքի ձգտիս, որպէսզի զգաս, որ սովորական մէկը չես»: Ուրիշ մը՝ Տրենց Մարգարեան ըսաւ՝ «Յայտնի է, որ դուն կ'ուզես զարգանալ ... խօսած ատենդ ուշադիր եղիր, որ բնա՛ւ ապուշ բաներ չըսես. օրինակ՝ մէկը ձեզի կը պատմէ թէ արկած մը պատահած է. դուն տեսա՞ր այդ արկածը. ո՛չ. ուրեմն կ'ըսես՝ «Լսեցի որ արկած մը պատահած է», որովհետեւ դուն վկայ չես: Իսկ եթէ տեսած ես, զուսպ կերպով խօսիր: Կամ օրինակ, երբ գիրք մը կը կարդամ եւ շատ կը հաւնիմ, կը փնտռեմ անոր հեղինակը եւ կ'երթամ անկէ դասեր կ'առնեմ: Ո՞վ կ'ընէ նման բան: Ոչ ոք: Նման բաներ սորված եմ տարբեր տեղերէ: Նաեւ առիթը ունեցած եմ 25 տարեկանիս, Եգիպտոսի շատ մեծ ընկերութիւններուն տնօրինութեան մէջ ըլլալ, NASITA, ուր երեք տարի աշխատեցայ: Բայց հայրս միշտ կ'ըսէր՝ «Աղբ վերցուր, պաշտօնեայ մի՛ ըլլար»: Որովհետեւ պաշտօնեայ ըլլալը մարդս կը սահմանափակէ: Ուրիշ դէպք մը. 1940-ական թուականներուն, քոյրս հիւանդացաւ, պատերազմի շրջանին էր. բժիշկը ըսաւ՝ եթէ գետնախնձոր տաք, կը լաւանայ: Բայց գետնախնձոր չկար: Դրամ ալ

1. Ֆրանսական այս ամսագիրը սկսած է լոյս տեսնել 1908 թուականին եւ նուիրուած է պատմական նիւթերու: Դադրած է 1937-1945 տարիներուն եւ վերսկսած 1946-ին:



չունէինք. քիլօն քսան դրուշ էր: Այս դէպքերը վրաս շատ ազդած են եւ հասկցած եմ, որ մարդ պէտք է դրամ ունենայ, որ կարենայ ընտանիքը ԼԱԻ պահել: Յետոյ մեծ մայրս մեռաւ, հայրս Շուպրայէն Աթապա քալելով գնաց-եկաւ, որ քսան ոսկի պարտք առնէ եւ մեծ մօրս թաղման ծախսը տայ: Այս ալ շատ ազդեր է վրաս: Երբ այս հողը առի, բարեկամներս ըսին՝ «Դուն հոն պիտի մորթուիս», որովհետեւ անապատ էր չորս դիս: Բայց չմորթուեցայ եւ նայի՛ր, ամէն կողմ ծառաստան է արդէն:

Տ. Ինչպէ՛ս եղաւ, որ այդքան աղքատութենէ հասաք մինչեւ այսքան հարստութեան:

Վ. Ա. Ես եւ եղբայրս միշտ միասին կ'աշխատէինք եւ ջանք կը թափէինք: Պատերազմէն ետք, սկսանք բանակին մոթոսիքները գնել 5 ոսկիի, վրան կը ծախսէինք տասը ոսկի եւ կը ծախէինք քսանի: Կը շահէինք հինգ ոսկի. մեծ գումար: Եղբայրս աշխատեցաւ փորագրիչ Հրանդ Գազազեանին² մօտ. ես ալ միշտ իր հետ եմ. 47-48 թուականներուն. յետոյ ձգեց եւ անցաւ Մինասեաններուն քով աշխատելու: Օր մը եկաւ եւ ըսաւ՝ «Վա՛րդ, մեքենայ մը կայ, դուն բան չես ըներ, թուղթը մէկ կողմէն կը մտնէ, միւս կողմէն դրամ կ'ելլէ»: Անշուշտ դրամ չէր ելածը, այլ էթիքէթներ: Այն օրերուն արգիլուած էր Մինասեանին գործարանը մտնել: Բայց ձեռով մը գացի-տեսայ մեքենան: Եղբայրս առաջարկեց որ մեքենան մենք շինենք. Հրանդ Գազազեանն ալ ըսաւ, թէ կրնանք շինել: Բայց ես հակառակ էի. մեքենան շինել չկա՛յ. մեքենան կու գայ, պէ՛տք է բերենք: Մեքենան ինը հարիւր ոսկի էր, իսկ մենք դրամ չունէինք: Քոյրս ամուսնացած էր Նափոլ Շարվարճեանին հետ, Սուտան: Գահիրէ կար Քիւրքճեան մը, որ Նափոլին ազգական էր. քոյրս տեսաւ որ հայրս շատ կը յոգնի, հաւանաբար ամուսնին ըսաւ եւ ան մեզի տուաւ 600 ոսկի, որպէսզի հայրս խանութ մը առնէ եւ աշխատի առանց շատ յոգնելու: Մայրս

ըսաւ՝ «Հող գնենք»: Հայրս չընդունեց եւ որոշեց որ մեքենայ մը կ'առնենք եւ գործ մը բանանք այդ դրամով: Մեքենան բերինք, բայց տեղ պէտք ունէինք: Կրկին գրեցի Նափոլին եւ 300 ոսկի պարտք խնդրեցի իրմէ: Քիւրքճեանին ըսաւ եւ ան ալ մեզի տուաւ: Սկսանք աշխատիլ էթիքէթ մեքենայով: Մեր առաջին գործն էր, ինչպէս հիմա կ'ըսեն՝ առաջին միլիոնն էր: անշուշտ միլիոն չէր: Բայց օրերը շատ դժուար էին 1958-ին, ամբողջ Գահիրէն կ'այրէր: Յարատեւ աշխատեցանք եւ կամաց-կամաց բարձրացանք: Հիմա տարբեր է, հիմա ամէն բան high tech է: Մեր յաջողութեան գաղտնիքը հաւանաբար այն է, որ միշտ մէկ քայլ առաջ ենք մեր մրցակիցներէն, մի՛շտ:

Տ. Միջազգային առողջապահական ճգնաժամի այս օրերուն – corona virus – չեմ կրնար չանդրադառնալ ձեր կենսաձեւին, որ շարժադուց եղած է առողջ սնունդի՝ հումակերութեան եւ բանջարակերութեան կողմնակից. կրնա՞ք խօսիլ այդ մասին եւ ըսել թէ այսօր ի՞նչ կը մրաժէք թագածեւ ժահրի մասին:

Վ. Ա. Նախ կրնամ ըսել որ 75%-ը սուտ է, 25%-ը ճիշդ է: Ամենէն կարեւորը որ կրնամ ըսել նման պարագաներու կամ ընդհանրապէս, քանի մը կանոններ են, որ մեզ առողջ կը պահեն՝ մարզանք, մաքուր օդ, մաքուր ուտելիք, կանուխ քնանալ. մանաւանդ այս վերջինը շատ կարեւոր է. մարդիկ TV-ին առջեւ կը նստին, յետոյ երբ քուններնին գայ, սուրճ մը կը խմեն. ասիկա լաւ չէ առողջութեան համար: Ինչպէս ժամանակին կ'ըսէին՝ արեւին հետ պիտի քնանաս, արեւին հետ արթննաս: Քունին մասին շատ կարդացեր եմ. երբ լաւ կը քնանաս metabolism-ը կը փոխուի եւ մարմինը ինքզինք կը մաքրէ, ինքզինք կը նորոգէ: Գալով ուտելիքին՝ կը նախընտրեմ բանջարեղէն եւ պտուղ օգտագործել միայն:

Տ. Կրնա՞ք խօսիլ ձեր ծնողքին եւ պապերուն մասին, այնքան որքան գիտէք, կամ լսած էք՝ ե՞րբ եկան եւ ի՞նչ պայման-

2. Երաժիշտ ուտահար Ճորճ Գազազեանի հայրը:



Ներու փակ հասարարուեցան Գահիրէ:

Վ. Ա. Հայրս Իզմիր թրքական բանա-
կի հիւանդանոցին մէջ կ'աշխատէր: Երբ
Իզմիրի ջարդը տեղի ունեցած է, հայրս
Յունաստան փախեր է, յետոյ Կիպրոս եւ
հոնկէ՝ Եգիպտոս: Յաճախ կ'ըսէինք հօրս՝
«Ինչո՞ւ հոս, այս երկիրը եկեր հաս-
տատուեր ես, Ֆրանսա կամ ուրիշ տեղ
երթայիր»: Կ'ըսէր՝ «Տղա՛ս, այն ատեն
կ'ըսէին որ Անգլիան Լոնտոնը կը ձգէ,
Եգիպտոսը չի ձգեր»: գիտե՛ս, անգլիացի-
ները երկար իշխեցին Եգիպտոսի վրայ:
Իսկ մայրս Համաշխարհային Առաջին
պատերազմի որբերէն էր, ոչ հայր տեսած
էր, ոչ մայր: Միսիոնարները գտած են եւ
առած: Հայրս շատ փնտռեց իր ծնողքը:
Չգտաւ: Մայրս իր մականունը չէր գիտեր,
միայն անունը՝ Սաթենիկ: Որբանոցին մէջ
շատ կու լայ եղեր, մականունը Զուռնաճ-
եան դրած են: Մեծ հօրս քոյրը, որ հոս էր,
իրեն կը հարցնէինք, թէ ո՞ր է ամուսինդ,
ո՞ր է մեր մեծ հայրիկը. կ'ըսէր՝ «Չեմ գի-
տեր. եկան տարին»: Թուրքերը կը մտնեն
իրենց բակը եւ աչքին դիմաց եօթը զա-
ւակներն ալ կը մորթեն: Յետոյ հագուստ-
ները կը պատռտեն եւ կ'ըսեն՝ «Պարէ՛» ...
(պատմելու ընթացքին պարոն Ալեքսան-
եան խիստ կը յուզուի): Ի՞նչ պարել ... եւ
երբ չի պարեր, սուրով գլուխին աջ կող-
մէն մինչեւ վիզն ու ուսը կը վիրաւորեն:
Մեծ սպի մը ունէր, մեզի ցոյց կու տար:
Կ'իյնայ գետին: Թուրքերը կարծելով որ
մեռած է, կը հեռանան: Հոն կը մնայ երեք
օր, կ'արթնայ, խոտ կ'ուտէ ... Փոքր էինք,
այս պատմութիւնները կը լսէինք միայն՝
ջարդ ջարդ ջարդ գաղթ կողոպուտ

**Տ. Գիտենք թէ քանի մը ամառ մաս-
նակցած էք Վենետիկի հայ լեզուի եւ
գրականութեան դասընթացքներուն.
ուրկէ՞ք այս հետաքրքրութիւնը եւ ինչո՞ւ:**

Վ. Ա. Երեք կամ չորս տարի մասնակ-
ցեր եմ այդ դասընթացքներուն: Ըսի ար-
դէն, որ ես միշտ կը սիրեմ սորվիլ: Ես որ
դպրոցը ձգեր եմ, հայերէնս պակսած է,
ատոր համար ուզեցի Վենետիկ երթալ:
Շատ լաւ բաներ սորվեցայ Րաֆֆի Սէթ-
եանէն, Սալբի Գասպարեանէն, հայ ճար-
տարապետութեան մասին ալ դասախօս

մը ունէինք, հիմա անունը մոռցեր եմ (հա-
ւանաբար՝ Արա Զարեան. Տ.) ...

**Տ. Գիտենք թէ շար գօրաւոր եւ մտե-
րիմ կապեր ունիք Հայաստանի հետ.
կրնա՞ք մանրամասնութիւններ փալ այս
մասին:**

Վ. Ա. Ըսեմ որ առաջին կազմակեր-
պիչներէն մէկն եմ Համահայկական Խա-
ղերուն: Երբ հոս դեսպանատունը բացուե-
ցաւ, ամէն մարդ դէմ էր... Մենք դարերով
եկեղեցիին կապուած ենք, Եգիպտոսի
մէջ ալ նոյնն էր, որովհետեւ ուրիշ բան
չունէինք: Երբ դեսպանատունը բացուե-
ցաւ – եւ առաջին դեսպանը շատ կարող
մէկն էր՝ Էդուարդ Նալպանտեան. սկիզ-
բէն ալ դեսպանատան շատ օգնած եմ թէ՛
բարոյապէս, թէ՛ նիւթապէս: Առաջին մեծ
գումար տուողը աղեքսանդրիացի մըն
էր, որ դժբախտաբար մահացաւ դեսպա-
նատան բացումէն առաջ: Ես երկրորդ մեծ
գումար տուողն էի: Սկիզբէն ալ միշտ
պատրաստ եղած եմ Հայաստանին օգնե-
լու, նոյնիսկ Սովետի օրերուն, երբ իրենց
համար մետալներ պատրաստած էի եւ
շնորհակալական նամակ մըն ալ ստա-
ցած: Համահայկական խաղերուն պարա-
գային ըսեմ. դեսպան Նալպանտեանը
հեռաձայնեց եւ ըսաւ՝ «Պարոն Ալեքսան-
եան, խնդրանք մը կայ, յուսամ չէք մեր-
ժեր: Համահայկական խաղերուն համար
պէտք է հանդիպիք պարոն Աշոտ Մելիք
Շահնազարեանին»: Գացի, հանդիպե-
ցանք: Յետոյ Փարիզի մէջ կրկին հանդի-
պեցանք Աշոտ Մելիք Շահնազարեանը,
Ալպէռ Պոյաճեանը եւ ես: Այն ատեն էր,
որ պարոն Մելիք Շահնազարեանը շատ
լաւ գաղափար մը ունեցաւ, որ ոչ թէ եր-
կիրներ, այլ՝ քաղաքներ հրաւիրենք, որ-
պէսզի կարելիին չափ շատ մարզիկներ
մասնակցին Համահայկական Խաղերուն:
Իսկ բաժակներուն համար առաջարկեցի,
որ հին հայկական նմոյշ մը կամ գծան-
կար մը տան, որպէսզի անոր հիման վրայ
պատրաստեմ բաժակները (տեսնել լու-
սանկարը): Վերջերս ստացայ նաեւ
«Պատուաւոր Անդամ»ի կոչում:

**Տ. Կ'ուզենք որ խօսիք ձեր փուած դա-
սախօսութիւններուն մասին. ի՞նչ լսա-**

րանի համար եւ ի՞նչ նիւթերու շուրջ էին այդ դասախօսութիւնները:



Վ. Ա. Երկու նիւթերու շուրջ խօսած եմ յաճախ՝ կեանքի մէջ յաջողութեան եւ առողջութեան մասին: Բայց ցաւալին այն է որ չեմ կարծեր թէ որեւիցէ ազդեցութիւն ձգած եմ: Կոկանեանի, Յուսաբերի, Գեղարուեստասիրացի մէջ ըրած եմ այս դասախօսութիւնները, եկողներն ալ թէ՛ երիտասարդներ էին, թէ՛ միջին տարիքի մարդիկ: Կը սպասէի, որ մէկը հեռաձայներ եւ հարցում մը հարցնէր, ինչպէս որ ես կ'ընէի ժամանակին, որովհետեւ ասիկա նիւթին մասին շատ բան գիտնալու ամենէն կարճ ձեւն է: Ըսեմ թէ ես ինչպէս այս թեքնիքին տիրացեր եմ. անգամ մը դասախօսութեան էի, հոս, 1956 թէ 1957 թուականին. դասախօսը հոգեբոյժ մըն էր՝ Ապու Մատիան Ալ Շաֆի'ի, ալճերիացի յեղափոխական մը, որ փախած էր իր երկրէն եւ Գահիրէի Համալսարանին մէջ դասախօս էր: Հոգեբանութեան մասին խօսեցաւ եւ ըսաւ՝ «Գիշերը հանգիստ քնանալու համար պէտք է ժամը ութէն ետք բան չուտել եւ իրիկունն ալ թեթեւ ուտել»: Այդ օրերուն ես կ'ուսանէի եւ լաւ չէի քնանար, որովհետեւ մայրս գիշերները **ճիյէր** կը տապկէր, ուղեղ կը պատրաստէր, որովհետեւ արդէն սկսեր էինք դրամ շահիլ ...Այս մարդը իմ առաջին ուսուցիչս եղաւ. ֆրանսերէն կը խօսէր: Ես երբ տեսայ, թէ անգլերէնը աւելի տեղ սկսած է ունենալ աշխարհի վրայ, անգլերէն սորվեցայ, մանաւանդ որ իմ ուզած գիրքերս անգլերէնով կը գտնուէին եւ աժան էին: Այդ մարդը շատ լաւ բան մը սորվեցուց ինծի. շատ պարզ գիրք մը առ ըսաւ, օրինակ Ռոպինսոն Զրուգօ. նախ կարդա՛ ամբողջը, սկիզբէն մինչեւ վերջ, յետոյ երկրորդ անգամ կարդա՛ բառարանը քովդ դրած, չգիտցած բառերդ եւ անոնց բացատրութիւնը թուղթի մը վրայ գրելով. երրորդ

անգամ կարդալուդ, այն բառերը որ չես գիտեր, քո՛ւ գրածդ կը կարդաս եւ այդպէսով նոր բառեր կը սորվիս: Տես այս գիրքերը (եւ ցոյց կու տայ գրասեղանին վրայ դիզուած անգլերէն գիրքերը) առողջութեան մասին շատ պարզ եւ յստակ գրուած գիրքեր են: Ինծի համար շատ կարեւոր անուն մըն է, գրէ՛ քովդ, Հըրպըրթ Շէլթըն³, շատ լաւ հեղինակ մը, որ

37 գիրք գրած է:

Տ. Եթէ պատահի որ երիտասարդ մը մօտենայ ձեզի եւ հարց փայ՝ «Ի՞նչ ըրիք, որ ձեր կեանքը դարձաւ այսքան յաջող թէ՛ նիւթապէս, թէ՛ առողջութեամբ», ի՞նչ կը պատասխանէք այդ երիտասարդին:

Վ. Ա. Ըսե՛մ. երբ բան մը շատ կը սիրես, այդ ճիւղէն դուրս մի՛ ելլեր եւ անշուշտ՝ յարատեւութիւն, յարատեւութիւն, յարատեւութիւն ... առաջինը ա՛յս է: Երկրորդ՝ աշխատած ատենդ պէտք է մի՛շտ յառաջանաս, մի՛շտ քայլ մը առաջ նետես, մի՛շտ: Եթէ տեսնէք թէ ինչպիսի՛ նոր, ժամանակակից գործիքներ ունինք ...

Տ. Ձեր երկու մանչե՛րն ալ ձեզի պէս կը մտածեն:

Վ. Ա. Ես բախտաւոր եմ, որ իմ տղաքս ճիշդ ինծի պէս ելած են եւ ինձմէ շատ աւելի լաւ են:

Տ. Կա՞յ բան մը, որուն մասին կ'ուզէիք խօսիլ, բայց չհարցուցի:

Վ. Ա. Վերջին բան մըն ալ ըսեմ. մարդ պէտք է շատ պարզ ըլլայ, շատ ինքնավստահ, առանց գոռոզ ըլլալու, համեստ ըլլայ, իր անհատականութիւնը պահելով. ասիկա շատ կարեւոր բան մըն է կեանքին մէջ:

Տ. Շատ շնորհակալ ենք այս հեփաքըքրական զրոյցին եւ ձեր տրամադրած ժամանակին համար:

Զրոյցը վարեց Մ. Երամեան

3. Հըրպըրթ Մգկուֆին Շէլթըն (1895-1985), ամերիկացի հեղինակ, մասնագէտ այլընտրանքային բժշկութեան, բուսակերութեան եւ հումակերութեան: 1956 թուականին, Ամերիկայի American Vegetarian Party-ին կողմէ ներկայացած է որպէս նախագահական թեկնածու:



ԿԻՆ ՄԸ ԵԳԻՊՏԱՀԱՅ ԿԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ամեն տարի Մայիս ամսուն Գահիրեի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ կը կատարուի հոգեհանգստեան պաշտօնը Սաթենիկ Չագըրի:

Հակառակ անոր, որ Սաթենիկ Չագըրի անունը այսօր կը յիշուի միայն որպէս ՀԲԸՄի կարեւոր բարերարներէն մէկն ու մշակութային փոքրիկ սրահի մը անունը, ան եղած է շատ աւելին, քան սոսկական մեծ նուիրատուներէն մէկը Եգիպտոսի ՀԲԸՄիութեան:

Տարին անգամ մը անոր հոգեհանգստեան պաշտօնը կը կատարուի Գահիրեի Ս. Գրիգոր Լուսաւորիչ շքեղ բայց կիսապարապ եկեղեցւոյ մէջ եւ յետոյ անունը լրիւ կը մոռցուի կրկին:

Սաթենիկ Թօփալեան ծնած է Կոստանդնուպոլիս, 1889 թուականին, Գէորգ Թօփալեանի եւ Արտեմ Ֆընտըքեանի յարկին տակ:

Նախակրթութիւնը ստացած է Իսկիւտարի Աղջկանց Ամերիկեան գոլեմէններս, ապա ծնողքին հետ փոխադրուած է Անգլիա. յաճախած է Սաութփորթ քաղաքի մարմնամարզութեան դպրոցը եւ վկայուած որպէս մարմնամարզի ուսուցչուի:

Հետեւած է Գահիրեի Leonardo Da Vinci նկարչական ակադեմիայի դասընթացքներուն եւ անձնական դասեր առած նկարիչ Աշոտ Զօրեանի մօտ, ինչպէս նաեւ հետեւած է Փարիզի Անտրէ Լոթիի Մոնբարնասի դասընթացքներուն:

1919-ին Մանչեսթըրի մէջ կ'ամուսնանայ Ճանիկ Հայկ Չագըրի հետ, որ տնօրէնն էր Wagon-lit-ի Միջին Արեւելքի Գահիրեի կեդրոնին: Կը հաստատուին Գահիրէ:

Գահիրեի մէջ Սաթենիկ Չագըր հասարակական բեղուն գործունէութիւն կը տանի հայ թէ օտար շրջանակներու մէջ: Եղած է անդամ ՀԲԸՄի Տիկնանց Որբախնամ յանձնախումբին, նախագահուի Այծեմնիկ Բարեսիրական Միութեան, փոխ ատենապետուի Եգիպտոսի Միջազգային Մարմնամարզական Միութեան, նախագահուի Միջազգային Girl Guide-երու հայկական



բաժնին եւ անդամ Եգիպտոսի Կանանց Միութեան վարչութեան:

Անշուշտ որ բազմաթիւ ճամբորդութիւններու ձեռնարկած պիտի ըլլար տիկին Չագըր, պարզապէս որովհետեւ միջոցը ունէր ճամբորդելու: Սակայն այդ ուղեւորութիւններուն մասին գրելը կամ դասախօսելը ամէն մարդ չէ, որ ըրած է կամ կ'ընէ:

Իրմէ կը մնան երկու գրութիւններ, մէկը՝ յստակօրէն

դասախօսութեան մը պատճենը, դասախօսութիւն, որ տուած է 1945 թուականին իր դէպի Հայաստան ըրած ճամբորդութենէն ետք, հայերէն լեզուով, իսկ միւսը՝ տեղեկագիր մը Կիներու Միջազգային Կազմակերպութեան համագումարին, անգլերէն լեզուով:

Ասոնցմէ դուրս իր հաշուակալական թուղթերը կը վկայեն այդ մարզին մէջ եւս իր ունեցած եթէ ոչ հմտութեան, ապա կահոյքի իր վաճառատան հաշիւները պահելու կարողութեան մասին:

Տիկին Չագըր իր գրութիւններէն աւելի ծանօթ է իր նկարներով, ընդհանրապէս դիմանկարներ եւ բնանկարներ: Եթէ այս վերջինները խիստ սկսնակ նկարիչի մը տպաւորութիւն կը ձգեն, դիմանկարները սակայն, ուր վրձինի հարուածները բաւական ինքնավստահ են, իսկ գոյներու խառնուրդը՝ ոչ սովորական, բաւական զգացմունքային են եւ կը գրաւեն դիտող աչքը: Քանի մը տասնեակ նկարներ կը մնան իրմէ, պահ դրուած Եգիպտոսի ՀԲԸՄիութեան կեդրոնի ամբարներուն մէջ:

1976 թուականին տիկին Չագըր Գահիրեի Զամալէթ թաղամասին մէջ գտնուող իր մենաստունն ու շրջակայ տարածքը (4097 քառ.մ.) նուիրած է Գահիրեի ՀԲԸՄիութեան եւ ստացած «բարերար» անդամի կոչում:

Զինք յիշողները ափսոսանքով կը խօսին անոր կեանքի վերջին օրերուն մասին, երբ, հիւանդութեան հետեւանքով արդէն սկսած է կորսնցնել մտային կարողութիւնն ու յիշո-



ղութինը:

Հետագայ գրութեան հանդիպեցայ ՀԲԸՄ-ի Գահիրէի վերջերս դասաւորուած արխիւներուն մէջ:

Հետաքրքրական էին գրութիւնը, դիտարկումները եւ նկարագրելու ոճը: Սակայն մէկ կէտ կար, որ անհասկնալի էր՝ 1938-ին մահացած Աթաթուրքին Սաթենիկ Չագըր ինչպէ՞ս կրնար հանդիպած ըլլալ 1950-ին:

Բայց գրութեան խիստ մանրամասնեալ ոճը կը հաստատէր, թէ հանդիպումը վաւերական էր, գրուած անմիջական տպաւորութեան տակ եւ ոչ՝ յիշողութեամբ:

Առաջին քայլը հաստատելը պիտի ըլ-

լար, թէ ճիշդ ո՛ր թուականին տեղի ունեցած է այն համագումարը, որուն մասին կը գրէ հեղինակուհին:

Ապա, դատելով անունին եւ թուականին դողդոջ գիրէն եւ օգտագործուած տարբեր մեղանքն կը հասնիմ այն եզրայանգումին, թէ 1935-ի համագումարին անմիջական տպաւորութեամբ գրուած էջերը, տասնհինգ տարի ետք վերատեսութեան ենթարկուած են, սրբագրութիւններ կատարուած եւ, տեսնելով որ այնտեղ անուն կամ ստորագրութիւն եւ թուական չկայ, այդ երկուքը աւելցուած են:

Մ. Երամեան

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Տիկնանց Միջազգային Կազմակերպութեան
Իսթանպուլի համագումարէն

12 Ապրիլին, որպէս փոխ-պատգամաւոր Գահիրէի Տիկնանց Միջազգային Կազմակերպութեան Իսթանպուլ մեկնեցայ ցամաքի ճամբով, Taurus Express-ով: Գահիրէէն ճամբայ ելայ wagon-lit ընկերութեան հանգստաւէտ **բուլմանով** եւ յաջորդ առաւօտուն հասայ Հայֆա, ուրկէ ինքնաշարժով, Թրիփոլիի վրայով Պէյրութ հասայ: Այնտեղ Taurus Express-ը մեզ կը սպասէր: Սուրիացի ութ պատգամաւոր տիկիններու հետ սկսաւ մեր ճամբորդութիւնը:

Ճամբուն ընթացքին բարձրագագաթ եւ ձիւնով ծածկուած լեռներ, բազմաթիւ առուակներ եւ գեղատեսիլ գիւղեր գերեցին մեզ:

Անցանք Ատանան արդիական մեծ կայարանէ մը, որմէ ետք տեսարանը նուազ առինքնող էր, մինչեւ Սաբունի լիճը:

Անցանք բլուրներով շրջապատուած հմայիչ Իզմիտ քաղաքի նաւահանգիստը եւ յանկարծ կարծես մտանք յաւերժահարսերու վայր մը: Մեր շոգեկառքը լեցուցաւ սպիտակ լոյսով եւ անուշ բոյրով. կ'անցնէինք ծաղկած կեռասենիներու մէ-

ջէն, որոնք մղոններ կ'երկարէին: Նման հրապուրիչ բան չէի տեսած:

Որքան արագ անցանք այս տարածքներէն եւ արդէն հասեր էինք Գատը Գիւղի Հայտար Փաշա կայարանը:

Շոգեկառքէն իջանք եւ շոգենաւով Վոսփորը կտրելով հասանք Իսթանպուլի եւրոպական ափը, ուր մեծ պանդոկներ կը գտնուէին:

Բերայի բարձունքին, հոյակապ տեսարանով, մեծ եւ արդիական պանդոկ մըն էր Park hotel-ը, իւրաքանչիւր սենեակին մէջ բաղնիքով եւ հեռաձայնով: Իրիկունները նուագախումբ մը պարեղանակներ կը հնչեցնէր, պարելու համար:

Յաջորդ առաւօտ մենք՝ պատգամաւոր տիկիններս գացինք Երլտըզի պալատը, ուր համաժողովը տեղի պիտի ունենար:

Երլտըզի պալատը կը գտնուի Պէշիկթաշի բարձունքին վրայ, սիրուն պուրակի մը մէջ, գեղեցիկ տեսարաններով շրջապատուած: Ոչ շատ բարձր՝ երկարականի, բայց երկար կառոյց մըն է, գեղեցկօրէն նախշուած ձեղուններով: Այնտեղ գտնուած յախճապակիներն ու սպասները այսօր կը



գտնուին Ազգային թանգարանին մէջ: Այս պալատը վերանորոգուած է եւ շքեղօրէն կահաւորուած՝ ընկուզենիէ եւ կաշիէ պատրաստուած սքանչելի կահոյքով, արդիական եւ հանգստաւէտ:

Ժողովի մեծ սրահը կարող է աւելի քան հինգ հարիւր հոգի պարփակել: Առաստաղէն կախուած թէ գետնէն բարձրացող հոյակապ մոմակալները, ոսկեգօծ ձեղուններն ու դռները գեղեցիկ հակապատկեր մը կը կազմեն մթագոյն տախտակամածին հետ: Աթոռներէն իւրաքանչիւրը ունէր իր փոքրիկ սեղանիկը: Ամէն բան այնքան գեղեցիկ էր. ոչ մէկ բան խորթ կը թուէր աչքիս:

Շէնքին մէջ կային աւելի փոքր ժողովասրահներ եւս, իւրաքանչիւրը գոյնի տարբեր երանգներով եւ անթերի ճաշակով կահաւորուած:

Պետութիւնը ամէն մանրամասնութիւն հոգացած էր, պատգամաւորներուն կեցութիւնը հանգստաւէտ դարձնելու համար. կային նամակատուն, հեռաձայնի եւ հանգիստի սենեակներ, գրասենեակ, ճաշարահ: Անթերի ֆրանսերէն եւ անգլերէն խօսող երիտասարդուհիներ կը սպասարկէին մեզի:

Բացման նիստը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 18 Ապրիլի առաւօտեան ժամը տասին: Երեսուն երկիրներ մասնակցած էին 240 պաշտօնական պատգամաւորներով:

Բացման հանդիսութեան կը նախագահէր հմայիչ եւ համակրելի տիկին Գորպէթ Աշալի: Բարի գալուստի խօսքերով յաջորդաբար հանդէս եկան կառավարութեան ներկայացուցիչներ, Տիկնանց Կազմակերպութեան տեղացի եւ անգլիացի նախագահուհիները, ինչպէս նաեւ տարբեր կազմակերպութիւններու ներկայացուցիչ տիկիներ, այս շարժումին իրենց համակրանքը արտայայտելու համար:

Յաջորդող վեց օրերը բազմազբաղ օրեր էին: Եղան բանախօսութիւններ տարբեր նիւթերու շուրջ, ինչպէս «Այրերու եւ կիներու միջեւ օրինական եւ քաղաքական հաւասար իրաւունքներ», «Համագործակցութիւն Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ», «Անչափահասներու

ամուսնութիւն», «Որոշ երկիրներու մէջ կիներու գերութեան հասնող վիճակը» համաժողովին գլխաւոր նիւթերն էին: Այս նիստերուն ժողովորդն ալ հրաւիրուած էր:

Երկու ուրիշ եւ բազմամարդ նիստեր տեղի ունեցան տեղւոյն համալսարանին, իսկ երրորդ մըն ալ՝ թատրոնի մը մէջ:

Վերջին նիստը նուիրուած էր ցամաքամասին վրայ տարածուած գաղթականներու աղիտալի վիճակին, որոնց զոհերը ընդհանրապէս կիներն են եւ մանուկները: Այս երեւոյթը արատ մըն է քաղաքակրթութեան համար: Խորհրդածոյովը այս հարցով լուծում մը պիտի ներկայացնէ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան, խնդրելով անոր շուտափոյթ հաւանութիւնը գաղթականներու կեցութեան եւ աշխատանքին վերաբերեալ:

Նոր վարչութեան ընտրութեան համար քուէարկութիւն մը տեղի ունեցաւ. ընտրուած վարչութիւնը պիտի գործէ յաջորդ երեք տարիներու ընթացքին: Առաջարկութիւն եղաւ յաջորդ համաժողովը Եգիպտոսի կամ Սպանիոյ մէջ գումարելու համար:

Այս բոլորը ծանր աշխատանք կ'ենթադրէր:

Հաճելի էր Իսթանպուլի քաղաքապետին կողմէ չորս հարիւր պատգամաւորներուն տրուած ճաշկերոյթը, որ տեղի ունեցաւ Տոլմա Պահչէ ապարանքին մէջ եւ որ կազմակերպուած էր Թուրքիոյ Տիկնանց կազմակերպութեան կողմէ:

Նոյն այս տիկիները մեզի համար նաւային զբօսապատոյտ մըն ալ կազմակերպած էին:

Այցելեցինք ասիական ափին գտնուող Պէյլէրպէի պալատը, ուր բանտարկուած է Ապտիւլ Համիտ, մինչեւ իր մահը:

Համաժողովէն ետք, մասնակիցներէն 44 տիկիներ պետութեան կողմէ հրաւիրուեցան Անգարա: Մասնաւոր շոգեկառքով՝ wagon-lit-ով յաջորդ առաւօտ հասանք, ուր դիմաւորուեցանք **փրոթոքոլի** բարրձրաստիճան պաշտօնեայի մը կողմէ եւ բազմաթիւ ինքնաշարժներով շրջագայեցանք քաղաքին տեսարժան վայրերը: Չոր, լեռնային շրջան մըն է



ասիկա, որ չունի Իսթանպուլի փարթամ կանաչութիւնը, բայց ունի իւրայատուկ հմայք մը:

Մեզի հետ շրջագայող թղթակիցներէն ոմանք տակաւին կը գրէին օսմանական տառերով, թէեւ պատերուն վրայ գրուածները լատինատառ էին: Յաջորդ սերունդը կարծես միայն լատինական տառեր պիտի օգտագործէ:

Մեր առաջին հանդիպումը եղաւ հին քաղաքին հետ. փողք, մոխրագոյն տնակներ, կառուցուած քաղաքին դիմաց գտնուող բլուրներու կողերուն, հովիտէն շարտուած քարերու նման՝ ասդին միջնաբերդ մը, անդին հռոմէական ամրոց մը եւ այլն:

Վարը արդիական քաղաքն է, որ շուտով պիտի դառնայ Թուրքիոյ մայրաքաղաքը:

Այցելեցինք երկրագործական նոր ուսումնարանը, ուր աշակերտները կ'ընդունուին տարի մը գիւղական դպրոցի մը մէջ դասաւանդելէ ետք: Երեք հարիւր երիտասարդ աշակերտները միայն գերմաներէն կը խօսէին, պարզապէս որովհետեւ իրենց ուսուցիչները գերմանացի են:

Յետոյ այցելեցինք աղջկանց գուլճ մը, ուր աշակերտուիկները քիչ մը անգլերէն կը խօսէին:

Թանգարանը փակ ըլլալուն – նոյնիսկ օտարերկրեայ հիւրերուն համար բացառութիւն չեղաւ – այցելեցինք Ընկերային կեդրոնը, գեղեցիկ շէնք մը, ուր ցուցադրուած էին հին իրեր եւ գեղեցիկ ասեղնագործութիւններ:

Ճաշելու համար հրաւիրուած էինք «Քէօշկ», Աթաթուրքի արդիական ագարակին վերեւ գտնուող տաղաւար մը, ուր մեծ ծաղկամաններով գեղեցիկ ծաղիկներ դրուած էին սեղաններուն եւ ուտեստներու ճոխ շքասեղան մը պատրաստուած էր մեզի համար:

Հոնկէ ետք գացինք միջնաբերդը տեսնելու: Ինքնաշարժներու մեր շարանը անցաւ քաղաքին նեղ, քարքարուտ եւ զանգիվեր փողոցներէն, հին տուններու մէջէն, զարմացնելով տեղացի փոքրիկներն ու տարեց կիները, որոնք իրենց գլուխնե-

րուն տակաւին կը կրէին աւանդական **չարշաֆը**:

Բարձրունքին վրայ հիացմունքով դիտեցինք մեր առջեւ պարզուած վայրի տեսարանին փառաւորութիւնը: Որքան կ'ուզէինք երկար մնալ հոն, ըմբռնելու համար բնութիւնը, սակայն ժամանակ չունէինք: Վերադարձանք:

Հազիւ կէս ժամ ունէինք պատրաստուելու Աթաթուրքին հետ մեր հանդիպումին, իր իսկ հրաւերով, իր առանձնատան մէջ:

Անցանք քաղաքին կեդրոնէն, ասֆալտապատ լայն փողոցէ մը, որուն երկու կողմերը արդիական առանձնատուներ կառուցուած էին: Բոլոր դեսպանատուներն ու հիւպատոսարանները այս փողոցին վրայ կը գտնուին:

Չորս քիլոմէթր անդին, բարձունքի մը վրայ կը գտնուի վիեննացի ճարտարապետի մը կողմէ կառուցուած Քէմալ Աթաթուրքի արդիական ու վարդագոյն առանձնարանը, ձորին վրայ շատ գեղեցիկ տեսարանով:

Երբ հասանք, ընդունուեցանք հանդիսութեանց պետին՝ maître de cérémonie-ի կողմէ, որ մեզ տեղաւորեց մեր երկիրներուն անուններու այբբենական կարգով: Պահ մը լռութիւն տիրեց, յետոյ դուռը բացուեցաւ:

Ներս մտաւ Աթաթուրք, որուն կը հետեւէին քանի մը նախարարներ: Անոր հատու, մագնիսացնող նայուածքը լռութեան մատնեց մեզ բոլորս:

Տիկնանց համաժողովի նախագահուհին շնորհակալական խօսք ուղղեց ֆրանսերէնով, ապա ներկայացուց մեզմէ իւրաքանչիւրը իր երկրով:

Յարգանք պարտադրող եւ համակրելի անձնաւորութիւն մըն էր Աթաթուրք. իր շարժումները կը հաստատէին, թէ զօրաւոր նկարագրի տէր անձ մըն է, սակայն իր կանաչ աչքերուն խորունկ եւ սուր նայուածքը կը թափանցէր մարդոց սիրտը եւ կը հաստատէր, որ ան ծնունդով իսկ ղեկավար է:

Անգլերէն չէր գիտեր, իսկ ֆրանսերէն՝ քիչ: Թարգմանը միշտ կողքին էր:

Դահլիճին դռները բաց ձգուած էին:



Անցանք նախասեակ մը, հայելապատ առաստաղով, ուրկէ կախուած էր յախճապակիէ մեծ ջահ մը, ադամանդէ հսկայ **ֆուրպոլի** գնդակի մը պէս: Սենեակին անկիւնները նոյնաձեւ լամբեր զետեղուած էին: Մէջտեղի մարմարեայ սեղանին վրայ կար սիկարէթի մեծ, ոսկեայ տուփ մը, որուն վրայ ադամանդներով իր անուան սկզբնատառերն էին՝ **KA**: Սրահին մէկ անկիւնը գրաւած էր նորաձեւ, հսկայ ժամացոյցը, ադամանդէ սլաքներով:

Յետոյ անցնաք վարի յարկի երկար հիւրասենեակը, որ կը բացուէր լայն պատշգամի մը վրայ: Սրահին ճերմակ պատերը եւ թեթելօրէն զարդարուած առաստաղը կատարելապէս կը ներդաշնակուէին դուրսի դաշտագետնին հետ:

Սրահին մէկ անկիւնը կը սպասարկուէր թէյ, պաղպաղակ, անուշեղէն եւ **շամփայն**:

Մեզմէ ետք ուրիշ հիւրեր սկսան գալ՝ նախարարներ եւ դեսպաններ իրենց կիներով եւ երեսփոխաններ:

Բազմաթիւ երաժիշտներու եւ երգիչներու ձայնը լեցուց սրահը նոր երգերով, որոնք այնքան նման էին ռուսական երգերու:

Ամէն ինչ աներեւակայելիօրէն գեղեցիկ էր:

Թողուցի բազմութիւնը եւ սկսայ հետազօտել բնակարանը, որ բաց ձգուած էր:

Սրահին պատերէն բաժիններ ապակեպատ էին, դուրսի տեսարանը վայելելու համար. յարկադարաններու վրայ՝ գեղեցիկ բոյսեր, լամբեր կային: Դուրսի ընդարձակ մարմարեայ պատշգամը, տան վարդագոյն պատերը, լողաւազանը, ցայտաղբիւրները զիս դուրս հրաւիրեցին: Հակադիր պատին վրայ կային գեղեցիկ կիներու փայտեայ որմնանկարներ: Գետինն ու աւազանները ճերմակ էին, սակայն ցայտող ջուրը կապոյտ էր:

Դուրսի աստիճաններէն վեր, երկրորդ յարկ բարձրացայ: Ընդարձակ դահլիճ մը, լեցուն հանրաժանօթ անձերու լուսանկարներով, իրենց ստորագրութիւններով, արծաթեայ շրջանակներու մէջ:

Մէկ անկիւնը դաշնամուր մը կար ու

վրան՝ Աթաթուրքի մօր երկու լուսանկարները, **չարշաֆ**ով եւ ընտանեկան այլ նկարներ: Յետոյ մտայ կանանց վերապահուած փոքր հիւրասենեակ մը, կապոյտ-ճերմակ կտաւէ վարագոյրներով եւ նոյն կտաւով պատուած ընկուզենիէ կահոյքով: Իրապէ՛ս հմայիչ եւ հանգստաւէտ անկիւն մը:

Անոր կողքին **L** ձեւով այլ սենեակ մըն էր, գրադարակներով լեցուն, որոնց վրայ միաձեւ կազմուած բազմաթիւ գիրքեր կային: Աչք մը նետեցի գիրքերուն. Այլ նիւթերու կողքին կային պատմութեան բազմաթիւ գիրքեր, աշխարհի տարբեր ազգերուն վերաբերեալ: Ընթերցումի համար շատ հաճելի վայր մը:

Ամենէն վերջին սենեակը ընդարձակ ննջասենեակ մըն էր, անկողինները ոսկեգոյն ծածկոցներով ծածկուած: Սենեակին մէջտեղի սեղանին վրայ կային ֆրանսական օրէնսգիտութեան չորս հաստափոր հատորներ: Այս սենեակէն կը բացուէր փոքրիկ տանիք մը, ուր ամերիկեան ռոճով լոգարան մը յարմարցուած էր:

Վար իջայ զարմանքի խառն զգացումներով՝ զօրաւոր անհատականութիւն մը ինչե՛ր կրնայ ընել՝ փոխակերպել հին Անգարան եւ զայն վերածել աշխարհի արդիական մայրաքաղաքներէն մէկուն, բան մը, որ քսան տարի առաջ անկարելի պիտի թուէր: Սակայն քաղաքը շրջապատող կրանիթեայ լեռներուն ետին տակաւին կայ յետամնաց, անցեալ դարուն մէջ ապրող ժողովուրդ մը:

Նոյն գիշերը բաժնուեցանք Անգարայէն, ուր անցուցեր էի կեանքիս ամենէն անմոռանալի օրերը: Ինչ որ իմ վրաս մեծ տպաւորութիւն ձգեց Աթաթուրքի մագնիսական անհատականութիւնն էր եւ կրանիթեայ բլուրներուն փառաշուք տեսարանը:

Համաժողովին վայել աւարտ մը:

Սաթենիկ Չազըր, 1938
Թրգմ. Անայիս Ճիզմէճեան

«ՀԱՅ ԿԻՆ»Ն ՈՒ ԽՈՇԱՆՈՑԸ

«Հայ Կին»ը անունն է կնոջական այն հանդեսին, որ Հայկանուշ Մառք հրատարակած է 1919-էն մինչեւ 1932 թուականը: Անցնող տարին հարիւրամեակն էր անոր սկիզբին ինչպէս եւ մեծ երախտաւորներուն՝ Կոմիտաս Վարդապետի, Յովհաննէս Թումանեանի, Լեւոն Շանթի, Երուանդ Օտեանի եւ Գալուստ Կիւլպէնկեանի ծննդեան 150 ամեակները:

Հայկանուշ Թոփուզեան-Թօշիկեան ծնած է Պոլիս, 1883-ին թէ 1885-ին, յստակ չէ: 1898-ին, Էսսեան վարժարանի ընթացքը աւարտելէ ետք, աշակերտած է Յ. Գուրգէնի: Միջոց մը օգնական ուսուցչուհիի պաշտօն վարած է Ագգային հիւանդանոցի որբանոցին մէջ:

Աշխատակցած է Իսթանպուլի եւ Իզմիրի հայ մամուլին, բանաստեղծութիւններով, պատմուածքներով, յուշագրութիւններով, հրապարակագրական յօդուածներով եւ թարգմանութիւններով:

1905-ին ամուսնոյն՝ Վահան Թօշիկեանի հետ հիմնած եւ խմբագրած է «Ծաղիկ» գրական հանդէսը:

1919-ին հիմնած է «Հայ Կին» կիսամսեայ հանդէսը, որուն խմբագրապետութիւնը վարած է 13 տարի, պաշտպան կանգնելով կնոջական դատին: Ապա նոյն դատին համար գրած է, ամուսնոյն խմբագրած «Վերջին Լուր» եւ «Նոր Լուր» օրաթերթերուն մասնաւոր էջերուն մէջ: Աշխատակցած է զանազան հանդէսներու, ինչպէս նաեւ Մխիթարեան Սանուց Միութեան «Սան»ին, ուր լոյս տեսած են իր ամենավերջին գրական գործերը գրեթէ ամբողջութեամբ: Նոյնպէս «Սան»ի հրատարակչականէն լոյս տեսած են Տիկին Զապէլ Ասատուրի եւ Տիկին Զարուհի Գալէմբերեանի կեանքին ու գործունէութեան մասին իր տուած բանախօսութիւնները, երկու գրքոյկներու ձեւով:



Հայկանոյշ Մառք առանձին հատորով լոյս ընծայած է «Ծուլութեան Պահերէս» անուն արձակ բանաստեղծութիւններու հատորը, 1920-ին:

Իր յրբեւեանին առթիւ, Տիկնաց Յանձնախումբի խմբագրութեամբ հրատարակուեցաւ «Հայկանոյշ Մառք - Կեանքն ու Գործը» հատընտիրներու ստուար հատորը:

Ունեցած ենք քանի մը կին մտաւորական-խմբագրուիչներ,

ինչպէս Էլպիս Կեսարացեան, Զապէլ Ասատուր, աւելի ուշ՝ Սիրան Սեգա (Զարիֆեան) եւ ուրիշներ, որոնց գլխաւոր մտահոգութիւնը եղած է հայ կնոջ կացութիւնը 19-րդ դարուն եւ գլխաւոր նպատակը եղած է հանդէսներու, դասախօսութիւններու եւ այլ միջոցներով նպաստել այդ կացութեան փոփոխութեան եւ հայ կնոջ զարգացումին:

«Հայ Կին» հանդէսին խմբագրականներէն քաղուած այս հատուածը կրնայ գաղափար մը տալ Հայկանոյշ Մառքի մտածողութեան եւ նպատակներուն մասին:

«Մեր ետին կը թողնենք արահետ մը, որ թէեւ տօնական կամ փայլուն ոչինչ ունի, բայց արահետ է, որուն առանց ամչնալու կը նայինք, գիւղի նեղ արահետ մը, որմով անցած ենք՝ կատարելով մեր պարտականութիւնները իբրեւ կին, իբրեւ ամուսին եւ իբրեւ մայր: Հիմա նոր ուղի պիտի հարթենք, անիկա պիտի ըլլայ քաղաքի լուրջ ճանապարհ մը, աւելի լայն, աւելի ուղիղ, աւելի ճիգ՝ դէպի նպատակը: Այդ ճամբուն վրայ պիտի կրենք մեր պատասխանատուութիւնը, պիտի ստեղծենք մեր իրաւունքները, պիտի դարբենենք մեր գործը՝ ամենեւին չհեռացնելով մեզ մեր կանացի բնագոյներէն, մեր տունէն: Անիկա պիտի տանի մեզ բարձունք

¹ Ծթիւ - շատ հիննալ, օթեկնալ, արուիւլ:

² Սարկիկ -մաքուր, կոկիկ:



մը, ուր կը մղեն մեզ մեր սեռի, մեր ազգի, մեր հայրենիքի վերածնունդին ջղապիրկ իղծերը»:

Ամբողջ թիւ մը դաստիարակութեան նուիրելէ ետք, տիկին Մառք խոհանոցին յատկացուցած է հանդէսին 11-րդ տարուան (1930) Յունուարի լրիւ թիւը, որուն խմբագրականին մէջ կ'ըսէ.

«Մեծագոյն սխալը կը գործեն անոնք, որ խոհանոցի ընծայուած յարգ մը կը նկատեն ստորին խորհրդածութեան արդիւնք: Խոհանոցը տան մէջ անկիւն մը, պատուո՛յ անկիւն մըն է, ուր պիտի տիրեն գիտական եւ առողջապահական ամենախիստ պահանջները: Այսպէս ըսելը պատիւ կը բերէ մեր **Ֆէմինիստ** ձգտումներուն»:

«Այո՛, խոհանոցը քիմիական աշխատանոց մըն է, ուր խիստ պիտանի գիտութիւն մը եւ արուեստ մը կը մշակուի: Ֆրանսացի նշանաւոր խոհարարապետի մը դամբանին վրայ սապէս քանդակուած է. «Իր ամբողջ կեանքը օգտակար աուեստի մը յատկացուեցաւ»:

«Այսուհանդերձ, խոհանոցէն սարսափողներ կան. անոնք, որ չեն ըմբռներ լաւ ու ճիշդ պատրաստուած ճաշի մը արժէքը, անոնք որ ճաշակ չունին, կամ անոնք որոնց գաղափարը կը պակսի իտէալ խոհանոցի մը: Տուներ կան, ուր խոհանոցը ամենէն զանց առնուած տեղն է, աղտոտ, իւղոտ, գարշահոտ, տակնուվրայ: Ասոնք ա՛յն տանտիրուհիներունն են ընդհանրապէս, որոնք բան գործ չունենալով մէկտեղ, ծոյլ-ծոյլ կը նստին եւ կը թողուն որ ամէն բան ծթրի¹, ապականի: Ընդհակառակը բանիմաց եւ գիտակից կիները մեծ յարգ կ'ընծայեն իրենց խոհանոցին, որ հիւրանոցէ մը տարբերութիւն չունի գրեթէ: Հոն ամէն բան իր տեղն է ու մաքուր: Սաները զինուորական շարքով եւ կարգապահութեամբ կարգ եղած են. իւղի, շաքարի, աղի, սուրճի, համեմներու ամանները կը ժպտին սպիտակ ու սպրկիկ²»:

«Ընդհանրապէս կը կարծուի թէ

ընտրեալ դասակարգը՝ այսինքն մտաւորականները կը խորշին խոհանոցէն: Ասիկա սխալ մըն է: Եւ ճիշդ ատոր հակառակը ապացուցանելու համար, ներշնչում մը ունեցանք ներկայ թիւը հրատարակելու, ուր, ինչպէս կը տեսնուի, մտաւորական լաւ դասակարգ մը ժամադիր է խոհանոցին անհրաժեշտ յարգանքը բերելու: Մեր բժիշկները, քանի մը յարգելի ներկայացուցիչներու բերնով, հոն կը բացատրեն գիտական հիմքը խոհանոցին եւ գրագէտները հաճելի ճկունութիւնով մը կը մօտենան անոր, խոհանոցէն հանելով ո՛չ թէ անուշաբոյր համադամ մը, այլ գեղեցիկ քերթուած մը գրեթէ: Նոյնիսկ բարձր դասի տիկիներն ապացոյցը տուին, որ գիտեն խոհանոց իջնել: Վերջապէս ամէնքը կը փառաբանեն խոհանոցը, որ ամէն կերպով արժանի է այդ պատիւին»:

Խմբագրականը կ'աւարտի այս խօսքով՝ «Եւ ի՞նչ աւելի պատեհ առիթ, քան նոր Տարւոյ առաջին օր մը, յարդարելու համար գրական այս սեղանը, որուն թագուհին է համեղ ու հայկական անուշապուրը»:

Թերթելով «Հայ Կին»ի այս թիւը, կը տեսնենք թէ այնտեղ պահուած են պատառիկներ այդ ժամանակաշրջանի մեր պատմութենէն, յուշերու ձեւով, որոնք կը բացայայտեն նաեւ առօրեայի մանրամասնութիւններ, ինչպէս Սիպիլի նամակ-յօդուածին մէջ, ուր կը կարդանք.

«Շատ տարիներ առաջ, այն երանելի օրերուն, ուր տիկ. Տիւսաբ իր «Մայտա»ն հրատարակելով, առաջին անգամ հրապարակ նետեց կնոջ իրաւունքներուն հարցը, ամբուռք³ մը առաջ եկաւ գրական երկինքին տակ: Անշուշտ յիշողներ կան թէ ամէնքը իրար անցան, ներքողականներով, դրուատիքներով ծափաճայն ողջունեցին մեր գրագէտները՝ տաղանդաւոր վիպագրուին: Գրիգոր Զօհրապն էր միայն որ ծառացաւ եւ ռմբակոծեց նորանշան այդ երկը իսկապէս ճշմարտազանցութեան իր նետերովը, որոնք իր ոսկի գրչին տակ զանակներ⁴, փայլակներ,

³ Ամբուռք - փոթորիկ.

⁴ Զանակ - ոսկիի կամ արծաթի կտորտանք.

կայծակներ արծակեցին շուրջանակի»:

«Բիւզանդ Բէչեան, Աղեքսանդր Փանոսեան, Արշակ Չօպանեան, Յովհաննէս Արշակունի եւ ուրիշներ բողոքեցին, եւ գլխաւորաբար Ռէթէոս Պէրպէրեան, որուն հօր եւ երկարատեւ բանավէճը մեծ գրագէտին հետ բոլոր սրահներուն մէջ արծագանգեց: Նոր սերունդի կիները, անոնք որ քիչ շատ զարգացումի յաւակնութիւն ունէին, սրտմտեցան Զօհրային դէմ, որ կը պնդէր թէ կիները տանը եւ խոհանոցին մէջ պէտք է մնան, թէ անոնք իրենց հրապոյրը կը կորսնցնեն մտաւորական գետնի վրայ եւ թէ բոլոր ուսեալ կանայք անճարակ տանտիկիներ են, հակիրթ մը խաշելու անկարող»:

«... Ժամանակին գրասէր եւ գրագէտ կիները **դակտ** ունեցան ձեռնպահ մնալու, գոնէ պաշտօնապէս, այդ պայքարին մէջ, որ ձմեռը տեղի կ'ունենար: Սպասեցին մինչեւ գարուն: Եւ Մայիսին մէջ օր մը, երբ հացկերոյթ մը սարքած էր Զօհրայ իր գրագէտ բարեկամներուն հետ, Ֆանարաքիի գեղազուարթ ծառաստանին ներքեւ, վերոյիշեալ գառնուկը (որուն խոհագիրը ներկայացուցած է Սիպիլ) սեղան բերուեցաւ, հետեւեալ պիտակով.

«Գիտուն կիներուն կողմէ մեծ գրագէտին»:

«Եւ մեծ գրագէտը յայտարարեց թէ



այդքան համեղ ոչինչ ճաշակած էր երբեք իր կեանքին մէջ»:

Յօդուածներուն հետ ներկայացուած են նաեւ խոհագրեր, օրուան յայտնի եւ նշանաւոր կիներուն կողմէ, իսկ յօդուածները ստորագրուած են մեր կարեւոր գրողներուն կողմէ ինչպէս Տիկին Զապէլ Ասատուր-Սիպիլ, Նշան Պէշիկթաշլեան, Շաւարշ Նարդունի, բժիշկներ Ա.Ն. Մեզպուրեան եւ Զենոբ, տիկին Մառք հարցազրոյց մը վարած է բրօժ. Աբրահամ Տէր Յակոբեանի հետ եւ այլն:

Հակառակ անցած ժամանակին, «Հայ Կին»ը կը պահէ իր հետաքրքրականութիւնը, հետաքրքրիւր ընթերցողներուն համար:

Մ. Ե.

ԱԶԱՏ ԲԱՌԱՐԱՆ

Ճառ – Տես Շէյքսպիրի Համլետը՝ «Բառե՛ր, բառե՛ր» ...

Կարծիք – բան մը, որ կրնաս տունը ձգել, երբ ժողովի կ'երթաս. հոն ա՛ն ընդունուած կարծիքը եւ դուն ալ կարծե՛ ...

Խրատ – դիւրին է տալու համար, դժուար՝ առնելու:

Հրաշք – չսպասուած, անկարելի բաներ, օրինակ՝ «Ժողովը սկսաւ ճիշդ ժամուն», «Հայ մը ժամադրութեան գնաց առանց ուշանալու» եւ այլն:

Ղալմաղալ – հայերէն չէ, բայց հայկական է՝ աղմուկ, իրարանցում:

Դդում – բանջարանոցային մշակոյթ: Երբեմն՝ մարդկային գլխու տնօրէն, տե՛ս դդում-գլուխ:

Վան – ինչպէս կարգ մը խոհարարներ որոշ կերակուրներու վրայ քիչ մը լիմոն կը քամեն որ ուտուի, այնպէս ալ որոշ բանաստեղծներ իրենց ոտանաւորներուն վրայ քիչ մը Վան կը ցանեն որ կարդացուի:

Պղպեղ – կծու համեմունք, առանց որուն չեն կրնար աշխատիլ խոհարարն ու ... երգիծաբանը:

Գուրգէն Մահարի



ԶԱՊԷԼ ԶԱՔԱՐԵԱՆ՝ ՄՈՌՑՈՒԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Բազմաթիւ գիրքերու հեղինակ ըլլալ, ամբողջ սերունդ մը դաստիարակած ըլլալ եւ յետոյ լրիւ իյնալ մոռացութեան գիրկը. յաճախ ա՛յս եղած է մեր՝ սփիւռքահայ մշակութային թէ գրական գործիչներու ճակատագիրը:

Իսկ երբ այդ մշակը «փափուկ» սեռին պատկանող անձ է, մոռացումը կարծես կրկնակի կը դառնայ:

Ութ գիրքերու այս հեղինակուհին մասին գրեթէ չինչ պահուած կայ, բացի փոքր հատուածէ մը Արտաշէս Գարտաշեանի մեծածաւալ գիրքին՝ «Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար»ին մէջ (հատոր Գ, էջ 464-465), եւ այն փոքր ծանօթութիւններէն, զորս ինք հայթայթած է իր փոքր, հազիւ 20 էջերէ բաղկացած «Գծագրութեան ուսուցումը Մանկապարտէզին մէջ» գրքոյկին ներածութեամբ, ուր կ'ըսէ.

«Երբ մանկավարժական ուսումնասիրութիւններ կատարելու համար, 1914 թուականին Զուիցերիա կը գտնուէի, բախտաւորութիւնը ունեցայ ներկայ գտնուելու գծագրութեան նոր մէթոտը մանկապարտէզի մէջ տարածելու համար կազմակերպուած դասախօսութիւններուն»:

Նոյն այս ներածութենէն կ'իմանանք, որ 1924-1925 դպրոցական տարեշրջանին տիկ. Զաքարեան վարիչ մանկապարտիզականուհիի պաշտօն ստանձնած է Գահիրէի (Եգիպտոս) Գալուստեան Ազգային Մանկապարտէզէն ներս:

Հեղինակին գործերուն մէջ կը գտնենք «Մանուկներու Բեմը», զոր կը յիշեմ մանկութեանս դպրոցին, Հալէպի Կիւլպէնկ-



եան Ազգային վարժարանի մանկապարտէզէն, որուն մանկապարտիզականուհին – որուն անունը, ցաւ ի սիրտ մոռցած եմ, բայց երբեք չեմ մոռնար իր շքեղ արտաքինը՝ սեւ սաթ մազերը, մեծ օղակաձեւ ականջօղերը եւ իր վարակիչ խանդավառութիւնը – միշտ այդ գիրքը կ'օգտագործէր մեզի նոր ոտանաւորներ, երգեր եւ զաւեշտներ սորվեցնելու համար: Նոյնիսկ նոր խաղեր կային այդ գիրքին մէջ, որ այդ օրերուն աչքիս շա՛տ մեծ եւ

շա՛տ հաստ կ'երեւար:

Յետոյ երբ քիչիկ մը մեծցայ, տարեդարձներէս մէկուն համար ա՛յդ գիրքը խնդրեցի որպէս նուէր: Զարմուհիս շատ զարմացած, բռնեց ձեռքէս եւ գրախանութ տարաւ.

–Ըսէ՛ նայիմ, թէ ի՛նչ գիրք է ուզածդ:

Եւ երբ ցոյց տուի «Մանուկներու Բեմը» իրեն, իր զարմանքը կրկնապատկուեցաւ.

–Ա՛յս գիրքը կ'ուզես:

Համոզուած չէր թէեւ, բայց գնեց:

Մինչեւ հիմա ունիմ, թէեւ մնացեալ գիրքերուս հետ ա՛յս ալ հոն՝ Հալէպ մնաց:

Այնքան փոքր էի, որ ոչ իսկ նայեցայ թէ ո՛վ էր անոր հեղինակը. նոյնիսկ չեմ յիշեր թէ տիկի՞ն մըն էր հեղինակը եւ կ'ափսոսամ որ հիմա ձեռքիս տակ չէ այդ գիրքը:

Պոլի՛ս տպուած էր, թէ՛ տիկին Զաքարեանի մնացեալ գիրքերուն նման՝ Գահիրէ:

Անշուշտ մանկավարժական գիրքի մը մասին ոչինչ կրնանք ըսել այսօր, գիրքին հրատարակութենէն կէս դար ետք, երբ



այնքան բան փոխուած է մեր կեանքին մէջ, առաւել եւս՝ մանկավարժութեան մէջ:

Բայց չենք կրնար ուրանալ, թէ ի՞նչ անսովոր երեւոյթ կը պարզէր այն օրերուն օրիորդ Զապէլ Զաքարեան, իր անձնական դպրոցը ունենալով, ապա մինչեւ Զուիցերիա գացած ըլլալով:

Բարեբախտաբար ձեռքիս տակ են իր խոհական երկու գիրքերը՝ «Ազատ խոհեր» Ա. հատոր 1924 եւ «Խոհեր» 1938, երկուքն ալ Գահիրէ հրատարակուած:

Կարծէք բնագոյով իսկ մանկավարժ Զ. Զաքարեան իր «Ազատ խոհեր» գիրքին «Երկու խօսք»ին մէջ կը գրէ.

«...ճոխ հրատարակութիւններու վրայ հատ մը եւս աւելցնելու նպատակաւ չէ որ ներկայ աշխատութեան ձեռնարկած եմ», այլ «Մեր գրական աշխարհը շատ աղքատ է մանուկներու վերաբերեալ հրատարակութիւններով, այդ կարեւոր պակասը լրացնելու ազնիւ փափաքն է որ զիս մղած է նմանօրինակ գործի մը հրատարակութեան ձեռնարկելու»:

«Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար» իր ստուար հատորներէն Գ.ին մէջ հեղինակը՝ Արտաշէս Գարտաշեան էջ 464-ի վրայ երկար հատուած մը կը յատկացնէ Զ. Զաքարեանի:

Օր. Զաքարեան ծնած է 1877-ին, Կ. Պոլիս եւ ուսումը ստացած Կ. Պոլսոյ «Դպրոցասէր»ի վարժարանէն ներս, ուրկէ եւ վկայուած է: Իր մէջ զգացած է ուսուցչութեամբ ծառայելու կոչումը եւ 1890-ին հետեւած է տիկին Մատակեանի մանկավարժական դասընթացքներուն:

1900-1907 ուսուցչական պաշտօն վարած է Տրապիզոն, Կերասոն եւ Ռօստոսթօ: 1908-ին Պոլսոյ Տատեան մանկապարտէզի վարիչ եղած է, 1909-ին՝ Դպրոցասէր Ընկերութեան վերակազմութենէն յետոյ, պաշտօնավարած է Դպրոցասէրի ուսուցչանոցը իբր մնայուն ուսուցչուի, Օր. Յուլիանէ Սարգիսեանի հետ:

1912-ին կը մեկնի Զուիցերիա, կը հետեւի ազատ մանկավարժական դասըն-

թացքներու եւ կ'ուսումնասիրէ տեղւոյն մանկապարտէզներուն մէջ գործածուած մեթոտը:

1914-ին Շիշլիի մէջ հիմնած է իր սեփական Տիպար Մանկապարտէզը: Համաշխարհային Ա. պատերազմին պատճառով, 1916-ին ստիպուած եղած է փակել զայն:

1922-ին Կիլիկիոյ պարպումին հետ ապաստանած է Ադեքսանդրիա, ուր հիմնած է Նոր Տիպար Մանկապարտէզը: Տարի մը ետք պաշտօնի կոչուած է Գահիրէի Գալուստեան Ազգ. վարժարանին մէջ, որպէս մանկապարտիզպանուի:

1933-1936 հաստատած է իր Տիպար Մանկապարտէզը Գահիրէի մէջ, ապա փոխադրուած եւ հաստատուած է Հելիոպոլիս, ուր գործած է մինչեւ 1944 թուականը:

1947-ին Հայաստան ներգաղթած է եւ աշխատած Երեւանի մանկապարտէզներէն մէկուն մէջ:

Մահացած է Երեւան:

Հրատարակուած գործերն են.

-Թատերական փունջ

-Խոհեր Ա.

-Խոհեր Բ.

-Նոր Մանկապարտէզ

-Գծագրութեան ուսուցումը մանկապարտէզին մէջ

-Մանուկներու բեմը

-Նոր մանկապարտէզ դասագիրք

-Մանկավարժական ուսումնասիրութիւն մը (Երեւան)

Այսօր իր վաստակը յարգելու համար, յիշելու համար իր անսակարկ նուիրումը, յարգելու համար մանաւանդ միշտ աւելի-ին ձգտելու եւ ինքզինք կատարելագործելու իր մարմաջը, էջ մը իր «Խոհեր»էն կը ներկայացնենք ընթերցողներուն: Այս էջը կը հաստատէ նաեւ, թէ Զապէլ Զաքարեան ո՛չ միայն երագող մըն էր, այլ նաեւ իր երագը իրագործել գիտցող ազնուական հոգի մը. վկայ իր հայրենադարձութիւնը:



ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԻՒՆԸ Գրեց՝ Զապէլ Զաքարեան

«Արեւ»ի մէջ կը հետեւիմ ուշի ուշով հայրենիքի վերաշինութեան շուրջ գրուած խմբագրականներուն ու յօդուածներուն եւ հոգիս կը համակուի յուզումի եւ ուրախութեան արցունքներով:

Հայաստան, ահա բառ մը, որ իր մէջ կը բովանդակէ ցեղիս ցաւը եւ տառապանքը եւ մեծութիւնը միանգամայն:

Ո՛չ մէկ ազգ, հայրենիքի մը տիրանալու համար այնքան զոհողութիւն ցոյց չէ տուած, որքան մենք:

Մեր հայրենիքը բոլոր ազգերու հայրենիքէն թանկ է գնուած, անոր համար առաւել քան պաշտելի պէտք է ըլլայ մեզի. մեր ցեղը իր հայրենիքին համար զոհած է բիւրաւոր կեանքեր, զոհած է իր ծաղիկ մտաւորականութիւնը, զոհած է վերջապէս բոլորը, բոլորը:

Ու այսօր, ահա՛, տիրացած ենք դարերէ ի վեր մեր երազած հայրենիքին, եւ նոր ու ազնիւ բաղձանք մը եկած է համակելու մեր սրտերը:

—Հայրենիքի վերաշինութիւնը:

Չեմ գիտեր ինչո՛ւ այս խօսքը սարսուռ մը եւ միանգամայն ուրախութիւն կը պատճառէ ինծի: Ի՛նչ, մեր հայրենիքը պիտի վերաշինուի իր զաւակներուն մէկ մասին մասնակցութիւնովը միայն, ան պիտի բարգաւաճի, պիտի ծաղկի եւ մենք իբրեւ հարազատ զաւակներ՝ մեր մասնակցութեան բաժինը պիտի չբերե՞նք անոր: Այս հարցումներն են, որ միտքս կը չարչարեն: Ո՛չ, ոչ մէկ հայ այդ հայրենիքին հարազատ զաւակը պիտի կրնայ համարուիլ, երբ անոր վերաշինութեան սրբազան գործին մէջ իր կարողութեան չափով չօժանդակէ:

Իմ մասիս. ես պիտի չուզէի երբեք իմ հայրենիքիս յառաջդիմութեան բարիքները վայելել, առանց իմ ուժերէս հոն մաս մը վատնելու: Չէ՞ որ ես պիտի չկրնայի այն ատեն իմ ոտքս հայրենիքիս սրբազան հողին վրայ դնել այն ազնիւ հպարտութիւնով, որով կը հպարտանան բոլոր

անոնք, որոնք ծառայած են այդ սուրբ գործին:

Քոյրեր, մեր հայրերը, մեր եղբայրները, մեր ամուսինները իրենց սուրբ արեան գնով հայրենիք մը նուիրեցին մեզի եւ որոնց գերեզմաններուն մէջ անոնց օրհնեալ նշխարները այն ատեն միայն պիտի հանգստանան եւ հայ երկինքին տակ թեւածող անոնց հոգիները այն ատեն միայն պիտի հրճուին, երբ մենք կարենանք գուրգուրալ անհուն զոհաբերութեան գնով ձեռք բերուած մեր հայրենիքին վրայ:

Իմացական, բարոյական, ֆիզիքական ու նիւթական հզօր ազդակներու շնորհիւ է որ հայրենիք մը կրնայ վերականգնիլ: Իր հայրենիքին ծառայելու պարտականութեան հուրով վառուած ոեւէ անհատ կրնայ օգտակար հանդիսանալ անոր վերաշինութեան գործին մէջ: Մին թող բերէ իր իմացական կարողութիւնը, ուրիշ մը՝ իր ֆիզիքական ուժը, երրորդ մը՝ իր նիւթական միջոցները: Եւ ահա այն ատեն երեւան պիտի գայ մեր հայրենիքը բարգաւաճ, ծաղկեալ եւ հպարտ, հպարտ իր այն զաւակներով, որոնք իրենց երակներուն մէջ ունին ազնուական ցեղի մը մաքուր արիւնը:

Այն ատեն մեր հայրենիքին մէջ պիտի տիրէ սէր եւ խաղաղութիւն, եւ ուրախութեան եւ երջանկութեան ճառագայթները պիտի գան փայլիլ մեր ցաւատանջ հոգիներուն վրայ:

Ոտքի՛ ելէք տանջուող եւ տառապանքի դառնութիւնները ճաշակող հոգիներ, ոտքի՛ ելէք: Թող ձեզմէ իւրաքանչիւրը զինուի ազնուական նպատակի մը համար: Եթէ հիմակ ալ թերանանք մեր պարտականութեան մէջ, այլեւս ինչպէ՞ս պիտի լռեցընենք մեր խղճին ձայնը, որ պիտի շարունակէ մեզ տանջել, մեզ հալածել ամէն վայրկեան, իբրեւ պարտազանց եւ իբրեւ արժանի այն բոլորին, զոր մեզի բաժին հանեց չար բախտը: Օ՛ն, շարժի՛նք, քոյրեր՝ եւ եղբայրներ եւ լծուինք մեր երկրի վերաշինութեան սրբազան գործին:



ՎՐԻՊԱԿ ԸՍՈՒԱԾ ՓՈՐՁԱՆՔԸ

«Վրիպակ» ըստած փորձանքը մեծ տեղ բռնած է միշտ խմբագիրներու կեանքին մէջ եւ չկայ խմբագիր մը, որ այս փորձանքին մատնուած չըլլայ: Այսպէս է մեր լրագրական կեանքին մէջ, ուր խմբագիրը տուեալ թերթի մը ամէն ինչն է, թէ՛ խմբագրողը, թէ՛ նիւթերը սրբագրողն ու կարգի բերողը, թէ՛ թարգմանողը եւ թէ՛ շարուած սիւնակներուն սրբագրութիւնները ընողը: Ամէն ինչ կ'անցնի մէկ, կամ շա՛տ շատ երկու հոգիի ձեռքէն, նոյնիսկ օրաթերթերու պարագային: Այսպէս է, սակայն, օտար թերթերու համար ալ, որոնք լրագրական ամէն մէկ աշխատանքի համար առանձին խումբեր ունին, անոնք ալ գերծ չեն այդ մեծ փորձանքէն, որ «Վրիպակ» կոչուածն է, իր բոլոր երեւակայելի կամ աներեւակայելի եւ զուարթ կամ երբեմն սահմուկեցուցիչ հետեւանքներով ...

«Վրիպակ»ի մը հիմնական պատճառը անուշադրութիւնն է, նախ գրաշարին եւ ապա խմբագրին մօտ: Գրաշարը, անուշադրութեամբ սխալ կը կարդայ բառ մը կամ տառ մը եւ այդպէս շարելէ վերջ, շարուածը կը փոխանցէ խմբագրին: Եւ, եթէ պատահեցաւ, որ խմբագիրն ալ, չար զուգահիւսութեամբ մը, նոյն տառին կամ բառին առջեւ ունենայ մտքի ցրուածութիւն մը կամ տեսողութեան տկարութիւն մը եւ դառնայ անուշադիր, ճիշդ տպուելիքը կը տպուի սխալ եւ անգամ մը տպուելէն ետք, այդպէս ալ կը մնայ:

Հայ խմբագիրը կ'ունենայ նաեւ իր արդարացումը հիմնաւորող պատճառներ, - փորձերը կը կարդայ խմբագրական սենեակին մէջ, որ յաճախ ակումբի վերածուած կ'ըլլայ խօսող-խնդացող այցելուներով ու կը կարդայ երբեմն յոգնած, թմրած վիճակով, երբ աչքերը կը տկարանան եւ ուղեղը կը կորսնցնէ արթնութիւնը, մանաւանդ որ յաճախ մեծ չափերու կը հասնի նիւթերու խճողումը: Երկու պարագաներուն ալ, անմիջապէս արդիւնքը կ'ըլլայ

մտքի ցրուածութիւնն ու անուշադրութիւնը, որոնց զոհ կ'երթայ, վերջին հաշուով, խմբագիրը:

Չկայ, ըսինք, խմբագիր մը, որ այս փորձանքին մատնուած չըլլայ: Մենք բոլորս ունեցած ենք մեր մեծ ու փոքր արկածները, մեր խմբագրական կեանքին մէջ: Եւ, ամենէն առաջ մենք ծիծաղած ենք մեր սխալներուն վրայ, եթէ անշուշտ այլափոխումը ականայ կամ ... կամաւոր չարափոխման չէ վերածուած, բառի մը կամ տառի մը տեղատուութեամբ կամ տեղափոխութեամբ:

Հայկական «պատմական» վրիպակներու փունջ մը տուած ենք անգամ մը Տարեգիրքիս 1955-ի Բ. հատորին մէջ (Նորին Վեհափառութիւն Մամուլը, էջ 157-200). հետաքրքրուողները կրնան գտնել այդ հատորը եւ կարդալ ու խնդալ: Այս անգամ ուզեցինք խնդալու նոր պատեհութիւն մըն ալ ընծայել մեր ընթերցողներուն, հրատարակութեան տալով մեր մամուլէն պատահօրէն քաղուած կարգ մը վրիպակներ, իրենց տպուած ձեւով: Եւ որովհետեւ մարդկային է սխալիլը, թող ոչ ոք մեղադրէ խմբագիրները ականայ գործուած այդ վրիպակներուն համար, քանի որ, ինչպէս ըսինք, անուշադրութիւնը ունի իր արդարացումը, ընդհանրապէս: Հարկ չկայ տալու անունները այն թերթերուն, որոնցմէ հրատարակուած են մեր կտրօնները: Կարելորը անունները չեն, այլ նշմարուած վրիպակները, որոնք, վստահ ենք, ամենէն առաջ պիտի խնդացնեն այդ վրիպակներուն զոհ գացած գրաշարներն ու խմբագիրները:

«Ամէնուն Տարեգիրքը»
Կարօ Գեորգեան
ԺԱ. Տարի, 1964, էջ 449-452



ՀԱՅԿ ՔԻՐԱՋԵԱՆԻ ՄԱՀԸ

Ֆրանսական նշանավոր թերթին՝ Le Monde-ի տարիներու թղթակից անդամ, նախկին եգիպտահայ Jean Gueyras-Հայկ Քիրազեանի մահուան առիթով հետեւեալը երեւցած է նոյն թերթին մէջ.

«Լրագրատան բոլոր յարկերուն մէջ զայն կը կոչէին «Քիր»: Լրագրող ժան Կէրաս մահացաւ Գահիրէ, Կիրակի 23 Փետրուար 2020-ին, 95 տարեկանին: Ան քսահինգ տարի շարունակ եղած է «Լը Մոնտ» թերթի Միջին Արեւելքի բաժնին վաւերական լրատուն: Իսկական անունն էր Հայկ Քիրազեան, հայ ընտանիքի գաւակ, ծնած է 24 Յունուար 1925-ին, Եգիպտոսի նախապատերազմեան շրջանին, բազմաթիւ ազգերէ բնակուած Հելիոպոլիս քաղաքը: Կը խօսէր սահուն ֆրանսերէն, անգլերէն, արաբերէն եւ հայերէն: «Քիր» հարցեր չէր յարուցեր, ոչ ալ մեծամտութիւն ունէր: Սակայն իր շրջանակը ունէ մէկէն աւելի լաւ կը ճանչնար:

«Քիր» ծածկանունը ընտրած էր, որպէսզի կարենայ աշխատիլ թէ՛ France Press (A.F.P.) գործակալութեան եւ թէ՛ Le Monde-ի հետ: Փարիզի A.F.P.-ին մէջ կ'աշխատէր իր ընկերոջ՝ Էրիք Ռուլոյի հետ, արաբերէն լեզուով լուրերու բաժնին մէջ: Միատեղ կը հետեւէին Գահիրէի ռատիոկայանի լուրերուն օրական քսանչորս ժամ: 24 Սեպտեմբեր 1970-ին յայտագիրը յանկարծ կը դադրի եւ Քուրանէն հատուածներ կը սկսին սփռուիլ: Քիր անմիջապէս, առանց երկար սպասելու կը յայտարարէ նախագահ Կամալ Ապտէլ Նասէրի մահը: A.P.F. քսան վայրկեանով կանխած էր մնացեալ բոլոր լրատուական կայանները:

Le Monde-ի մէջ, ուր սկսած էր աշխատիլ 1971 թուականին, Էրիք Դուլոյի յանձնարարութեամբ, Քիր եղած էր սիւներէն մէկը Միջին Արեւելքի բաժնի ծառայութեան: Եթէ պատահէր, որ իր յօժարութեամբ ուրիշներու եւս պարտականութիւններ յանձնուէին, շատ խստապահանջ կ'ըլլար, բծախնդիր, տեղեկացուած: Արեւածագին կը բազմէր իր գրասեղանին ետին, ուր տրցակ մը հեռագրալուրեր զինք կը սպասէին. աջին, պատուհանին կողմը հսկայ ձայնասփիւռ մը միշտ ֆրանսական երաժշտական կայանին վրայ լարուած էր. ձախին՝ մոխրաման մը, առաւօտեան եօթն իսկ ընդունելու իր առաջին **սիկարը**: Կը



սիրէր դասական երաժշտութիւնն ու սիկարները, որոնք կարծէք իր «անթացուպերն» էին, դիմակայելու համար Միջին Արեւելքէն եկած տխուր իրադարձութիւններուն լուրերը: Այդ լուրերը զիրար կը հրմշտկէին՝ արաբական պարտութիւններ, Եմէնի մէջ քաղաքական պատերազմ, նասէրականներու փլուզում, լիբանանեան ողբերգութիւն, իրանեան յեղափոխութիւն, իսլամական քաղաքականութեան ուժեղ վերելք ...

Քիր այս բոլորը կը դիմգրաւէր իր դարաշրջանին յատուկ զգայնութեամբ, բան մը, որ յատուկ էր Եգիպտոսի փոքրամասնութեան պատկանող երիտասարդներուն, որոնք ընդվզած էին իրենց շուրջի թշուառութենէն եւ ձեւով մը դիւթուած էին ընկերվարական կարգերէն: Սակայն արաբական վերածնունդի մը յոյսը, զոր ժամանակ մը մարմնաւորած էր նախագահ Նասէր (1956-1970) շուտով փուլ կու գար իրականութեան մը առջեւ, զոր կամաւոր կերպով կառուցուած էր փտած եւ բռնակալ վարչակարգի մը վրայ:

Այս մարդիկը, կիները, բոլորը կը մերժէին իրենց հողերուն բռնագրաւումը եւ համաձայն էին Իսրայէլի եւ պաղեստինցիներուն միջեւ երկխօսութեան, շատ աւելի ուշադիր՝ պաղեստինցիներու ներքին պայքարին, զոր հասած էր իրենց, հատուցելու համար այլ տեղ կրած իրենց պարտութիւնը:

Սակայն ոչինչ, ոչ իսկ ճոխ ապրելակերպը – որուն վկան իր մարմնեղ կազմուածքն էր – կը խաթարէր բարձր տրամադրութիւնն ու ընկերական ջերմութիւնը Քիրին: Չէին պատկերացներ զինք որպէս թղթակից: Հակառակը. երբ անապատային ոճով (saharienne) շապիկ մը վրան, գրպանները նօթատետրերով եւ սիկարներով լեցուն կ'երթար պատահար մը հետազօտելու, նոյնքան բծախնդիր էր, որքան Փարիզի մէջ: Հետեւեալը վկայութիւնն է

Լիբանանի տիրազիններու առաջնորդ Ուալիտ Ճումպլաթի.

«Երբե՛ք պիտի չմոռնամ զինք՝ Le Monde-ի թղթակից Ժան Կէրասը, երբ 1982-ին, իսրայէլեան բանակին կողմէ Պէյրութի պաշարումի օրերուն, ամէն առաւօտ զանազան ճակատներ կ'այցելէր, ուսէն կախուած իր պաշուակով»:

Իրադարձութիւններու հանդէպ իր յարգանքը կատարեալ եղած է միշտ:

Պիտի չմոռնանք այն օրը, երբ իրանական յեղափոխութեամբ խանդավառ այս անձը մեզ տարաւ քրտական լեռներուն մէջ հարցաքննելու համար Ժերունի «այաթօլլահ» մը, որ բացառիկ շահեկանութիւն կը ներկայացնէր իրեն համար, որովհետեւ համադրութիւն մը յղացած էր շիի-ներուն եւ մասականներուն միջեւ: Այդ արկածախնդրութիւնը վատ աւարտ ունեցաւ, որովհետեւ իր ինքնաշարժը՝ Land Rover-ը փոս մը գլորեցաւ, բայց ինք անվնաս դուրս ելաւ, շնորհիւ քիւրտերուն, որոնք վարժ էին նման պատահարներ

դիմագրաւելու:

Քիր ունէր իր անձնական համոզումները. հակառակ անցնող տարիներուն, մնացեր էր Գահիրէի արուարձաններու ըմբոստ երիտասարդը: «Բայց երբ կը գրէր բժախնդրութեան տաղանդով մը, իրադարձութիւններու հանդէպ իր յարգանքը կատարեալ էր» կը խոստովանի Փարիզի իր ընկերներէն մէկը՝ Ահմատ Սալամաթիան, Միջին Արեւելքի մասին անսահման գիտելիքներով գրավաճառ մը:

Քիրի ասպարէզը վերջ չգտաւ հանգստեան կոչուելով: Գրեց «Le Monde դիւանագիտական»ին համար: Աւելին՝ սկսած էր համացանցային էջ մը, ուր ամէն օր կը տողանցէին Միջին Արեւելքի մասին անգլերէնով գրուած գրեթէ բոլոր յօդուածները:

Պիտի կարօտնանք զինք՝ Քիրը, որ մեզի համար եղած էր լրատուութեանց ընկեր մը, որքան բարեկամ, նոյնքան հմուտ:

*Alain Frachon, Le Monde
Թարգմ. Անայիս Ճիզմէճեան*

ԲԱՐԵՐԱՐՈՒՀԻ

ԱՐՏԵՄԻՍ ՆԱԶԱՐԵԱՆԻ ԿՈՐՈՒՍՏԸ

Ապրիլ 9-ին, Նիւ Ճըրզիի մէջ, Քորոնավիրուսի պատճառած առողջական բարդութիւններու եւ կարճատեւ հիւանդութեան իբր հետեւանք, կեանքին հրաժեշտ տուաւ Արտեմիս Նազարեան, որ հայաշխարհին ծանօթ էր որպէս բարեսրտութեամբ, ջերմ հոգածութեամբ եւ առատաձեռնութեամբ փայլող ազնուականութեան տիպար:

Ծնած է Թօփճեան ընտանիքին մէջ, 1932-ին Հալէպ, Սուրիա: Հօրենական ընտանիքը Ամերիկա փոխադրուած է, երբ ինք տակաւին երախայ էր: Մեծցած եւ կազմաւորուած է Ուոթըրթաունի մէջ, Մէսէչուսեց եւ աւարտած Պոսթընի Համալսարանը որպէս գերազանց ուսանող, հաշուագիտութեան ճիւղին մէջ: Ամուսնացած էր ապագայ մեծ բարերար Նազար Նազարեանի հետ, զաւակը Լիբանանի հանրաժանօթ բարերարներէն Լեւոն Նազարեանի:

Ըլլալով կրթութեան կենսական դերին խորապէս հաւատացող եւ արուեստները հովա-



նաւորող անձնաւորութիւն մը, Արտեմիս Նազարեան լայն աջակցութիւն բերած է ՀԲԸՄի ուսանողներու տրամադրուած բարձրագոյն ուսման կրթաթոշակներուն, աշխարհի տարածքին: Իր այս տեսլականին մէկ այլ դրսեւորումն է ՀԲԸՄի Լոս Անճէլըսի Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի նախամանկապարտէզի բաժինին կառուցումը:

Տիկին Նազարեան իր ներդրումը ունեցած է անթիւ յանձնախումբերու, եկեղեցասէր տիկնանց խմբակցութիւններու, իր բնակավայր Էնկըվուտի Կանանց Ակումբին, որոնց շարքին նաեւ այլ ընկերային եւ մշակութային ձեռնարկներու մէջ:

Այս տխուր առիթով իր խօսքին մէջ ՀԲԸՄի նախագահ տիար Պերճ Սեդրակեան ըսած է՝ «Իր կեանքի ապրող օրինակը, որպէս ներշնչման աղբիւր եւ խօսուն վկայութիւն, պիտի շարունակէ մնալ ՀԲԸՄի եւ Հայոց ժամանակակից պատմութեան էջերուն վրայ»:



ՓԱԹՐԻՔ ՏԵՎԵՃԵԱՆ (1944-2020)

Ֆրանսահայ քաղաքական այս գործիչը, որ ընդհանրապես աշխատած է առանց մեծ աղմուկի, մեծ դեր ունեցած է ոչ միայն Ֆրանսայի քաղաքական կեանքին մէջ, այլ եւ հայութեան համար, երբ 70-ական թուականներուն որոշած էր պաշտպանել Յեղասպանութեան արդարութիւն պահանջող տղոց դատը:



Այդ միջոցին էր, որ Ֆրանսայի մէջ առաջին անգամ ըլլալով պաշտօնական կառոյցի մը մէջ կը հնչէին Հայոց Յեղասպանութեան մանրամասնութիւնները:

Ֆրանսայի քաղաքական կեանքին մէջ իր եռանդն ու կարողութիւնները ներդրած Տեվեճեան եղած է արդարութեան նախարար, երեսփոխան եւ Անթոնիի քաղաքապետ: Մինչեւ իր կեանքին աւարտը ան մնաց հայոց ճեղասպանութեան մասին քաջաբար արտայայտուող եւ անոր ներքին ծալքերը բացայայտող անձ մը: Իր գիտականօրէն հաստատուն եւ հակակշռուած խօսքը ազդեցութիւն ձգած է եւ արդիւնք ունեցած, Ֆրանսայի պետութեան հայերուն հանդէպ ունեցած կեցուածքին եւ քաղաքականութեան մէջ:

Իր մահուան տխուր առիթով մեծ գովեստով խօսած են Ֆրանսայի քաղաքական այրերը, խորապէս գնահատելով զինք որպէս հանրապետական արժէքներու մարմնացում, արդարամիտ, կորովով եւ եռանդով լեցուն ու

անկեղծ գործիչ. յատկութիւններ, որոնք դժբախտաբար հազուագիւտ են ժամանակակից քաղաքական այրերու մօտ:

Որպէս Սփիւռքի զաւակ, Սեւրի Սամուէլ Մուրատ վարժարանի նախկին սան, հայ մշակոյթի հաստատուն գիտելիքներու պաշարով զինուած Տեվեճեան երբեք չմտածեց իր մականունը

փոխել, որպէսզի աւելի դիրահուսն ըլլար օտարներուն համար:

Վերջին տարիներուն վարած է հետեւեալ պաշտօնները.

Minister of Economic Recovery Plan 2008-2010.

Minister of Industry 2004-2005

Minister of Local Liberties 2002-2004

Իր մահը կորուստ մըն է որքան Ֆրանսայի, նոյնքան եւ աւելի ամբողջ հայութեան համար. իրմով մեր դատին ուղղամիտ եւ անաչառ մարտիկներէն մէկն է որ կը կորսնցնենք:

ՀԲԸՄիութեան մեծ ընտանիքը հպարտ է, որ տարիներէ ի վեր գործակցած է Փաթրիք Տեվեճեանի հետ եւ ուրախ է, որ իր վերջին՝ 90-րդ ընդհանուր Ժողովին, տեղի ունեցած 2019 թուականին Փաթրիքի մէջ, գնահատած է զինք իր ամենէն բարձր շքանշանով՝ Պօղոս Նուպարի անուան մրցանակով, հայ ժողովուրդին եւ անոր հարցերուն իր կեանքի անսակարկ նուիրումին համար:

ԱՆՅՈՅՍ ՎԵՐՋԱԼՈՅՍ

Փափուկ ծածկոցներու տակ, խաշած ու ճգմուած խնձորը ուտելէ ետք, կը հանգչիմ: Անկողնիս երկու կողմերը վեր առնուած ցանկապատ-արգելակները չեն թողուր որ ոտքերս գետին դնեմ, հաւանաբար որովհետեւ առանց օգնութեան ոչ մէկ քայլ առնելու կարողութիւնը ունիմ:

Երբ հարազատներուս ուշադրութիւնը ուզեմ գրաւել, բարձր-բարձր ձայներ կը հանեմ: «Անպայման անօթի է», կը լսեմ քնքոյշ ու ներողամիտ ձայն մը: Ակռայ չունիմ, ուստի բոլոր կերակուրներս քաշուած են ու անհամ, աղը քիչ, շաքարը քիչ: Աղիքներուս աշխուժութիւնը կառավարելու անկարող՝ շորիկով

կ'ըլլամ միշտ: Որքա՛ն կը սիրեմ լոգնալու պահը, երբ փորձառու ձեռքեր զիս կը գրկեն ու տաքուկ ջուրին փայփայանքները վայելելէ ետք, կը փաթթեն զիս մաքուր անձեռոցներով:

Չկարծէք որ կեանքի առաջին կայարանը հասած նորածին մըն եմ, պարզապէս վերջին հանգրուանը սպասող, հաւանաբար հոգեառ հրեշտակին սուր տեսողութիւնէն վրիպած 99-ամեայ ծերունի մըն եմ ես:

Երկու ամիս առաջ, տարիքիս համեմատ աշխոյժ ու ինքնաբաւ ծերունի մըն էի ... ո՞ր են այդ օրերը, երբ իմ 70 տարուան կինս ողջ էր տակաւին: Կարծէք անոր անվերադարձ



բաժանումը խորտակեց զիս, եղայ թոյլ ու անկարող:

Գահիրէ ծնած ու ապրած եմ. ինծի համար եգիպտոսը հարազատ հայրենիք եղած է միշտ: Նախնական ուսումս ստացած եմ անգլագական Գալուստեան Ազգային Վարժարանէն ներս: Փոքր տարիքէս նետուած եմ ազգային գործերու մէջ, եղած եմ վարչական անդամ Հայ Գեղարուեստասիրաց Միութեան երիտասարդաց յանձնախումբին, ապա անդամ աւագ վարչութեան: Ընտրուած եմ երեսփոխան Գահիրէի Ազգային Առաջնորդարանին ու խղճմտանքով ծառայած եմ իմ վաղեմի վարժարանիս, որպէս հոգաբարձու եւ միշտ թիկունք կանգնած եմ անոր գոյատեւման: Վերջապէս ի՞նչ է գաղութ մը առանց իր հայաշունչ կառոյցներուն, իր եկեղեցիին, վարժարաններուն եւ ակումբներուն:

Զաւակներս մեծցուցած ու դաստիարակած եմ որպէս նախանձախնդիր հայեր, հայերէն լեզուն նկատելով սուրբ, որուն աղաւաղումը Աւետարանին մէջ յիշուած եօթը մահացու մեղքերէն աւելի յոռի կը դասեմ:

Երբ համալսարանի շրջանը թեւակոխեցին, մօտէն կը հետեւէի իրենց եգիպտացի բարեկամներուն հետ ունեցած յարաբերութիւններուն, որ անոնցմէ մէկը յանկարծ չկապուէր ոչ-հայու մը հետ: Բարեբախտաբար ըլլայ տղաս, ըլլայ աղջիկս, ինծի բաւական մտահոգութիւն պատճառելէ ետք, ի վերջոյ ամուսնացան հայերու հետ, բախտաւորուեցան անուշիկ-թոմպուլիկ զաւակներով ու երջանկացուցին զիս:

1997-ի ահաբեկչութիւնը իր դաժան աւերը գործեց Եգիպտոսի մէջ, վնաս հասցնելով երկրին զբօսաշրջութեան ու տնտեսութեան: Զաւակներս որոշեցին մեկնիլ, «փոքրիկներուն համար ապահով ու կայուն ապագայ» կերտելու համար...

Չէի համարձակեր տարհամոզել զիրենք. հապա՞ եթէ չմեկնելու պնդումներուս տեղի տալով մութ ապագայի մը զոհ երթային թոռներս: Խեղճ կինս, խեղդելով իր վիշտը, կը ջանար մխիթարել զիս, «Ի՞նչ կ'ըլլայ, Երուանդ, թող երթան, լաւ կեանք մը սկսին Գանատա, հիմա աշխարհը առաջուանը չէ, պզտիկցած է, հեռաձայնով շատ դիւրաւ կը խօսինք հետերնին եւ շուտ-շուտ այցի կ'երթանք իրենց, թող առողջութիւն ըլլայ, ամէն բան դիւրին կ'ըլլայ», կը կրկնէր, առանց որ ինք անգամ հաւատար իր ըսածներուն:

Ա՛խ աս Գանատան, չէ՞ր բաւեր որ վաթսունական թուականներուն ան կլլած էր եգիպտահայ գաղութին լաւագոյն խաւերը, ընտանիքներ բաժան-բաժան ըրած եւ հիմա՝ 21րդ դարուն կուգար քանդելու իմ ալ տունս ... ճակատագրէն փախուստ չկայ:

Կնոջս թաղումին համար եկած էին զաւակներս, սակայն «ապագաս» անորոշ կը թուէր ինծի: Անշուշտ առանձին տունը մնալը անհնար էր ինծի համար՝ «Արդեօ՞ք զիս Այծեմ-նիկ Հանգստեան Տուն պիտի տեղաւորէին», - կը խորհէի: Աղջիկս վճռական «պապան հետս Գանատա պիտի տանիմ» ըսաւ:

Ի՛նչ դաժան կատակերգութիւն ... Ե՛ս ալ Գանատայի որկորէն վար պիտի սահէի ու անհետանայի անոր անունը՝ որովայնին մէջ: Տարիներու ընթացքին գուրգուրանքով հիւսած յիշատակներս ու սիրով հաւաքած գոյքերս ոչնչացան, տան կարասիները անողոք աչքերով վաճառականի մը բաժին ինկան, իսկ թանկագին գրադարանս նուիրուեցաւ Գահիրէի ՀԲԸՄին: 99 տարեկանիս դուրս եկայ բնակարանէս, միջակ ճամպուրկի մը մէջ ամփոփած հագուստեղէնովս: Վերջապէս մահուան սեմին անձի մը համար այդքանն ալ շատ է:

Այս բոլոր հարուածներուն դիմացայ քաջութեամբ ու լաւատեսութեամբ: Բախտաւոր էի որ զաւակներս չէին լքած զիս, ահաւասիկ կ'երթայի վայելելու թոռներս: Ի՛նչ ծրագիրներ կը մշակէի երկար ճամբորդութեան ծանծրոյթը փարատելու համար: Անոնց հայրենասիրութիւն պիտի ջամբէի, միասին պիտի կարդայինք Յովհաննէս Թումանեան եւ Ռաֆֆի, պիտի սկսէինք Հայկ Նահապետէն ու հասնէինք մինչեւ Անիի անկումը ...

Սակայն այս բոլորը ցնդեցաւ երազներուս «անկում»ով: Հայ մայր-հայր ունեցող թոռներս մոռցեր էին հայերէնը ...: Քաղաքավարութեան համար «Good morning մեծ-պապա» մը կ'ըսէին ինծի ու անկէ զատ ոչ մէկ բառ հայերէն կը խօսէին տան մէջ ...:

Սենեակիս փոքրիկ պատուհանին առջեւ, անուաթոռին մէջ կքած կը դիտեմ դուրսը, ուր ծիւնը իր թանձր վերմակին տակ առած է մայթն ու փողոցը: Դրացիին մերկ ծառին վրայ փայլուն փետուրներով յամառ ագռաւ մը կը կռնչայ, յուսալով պատասխան մը ստանալ իր բացակայ կողակիցէն:

Սօսի Ներեպեան-Յակոբեան

¹Անունը - շատ խորունկ, անյատակ



«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՆՑ ՀԱՅՈՒ»

Աւելի քան հարիւր տարուան կեանք ունեցող տարեգիրքի մը՝ «Գաւառին Տարեցոյցը»-ի 1911-ի հատորին էջ 203-ին վրայ կը գտնենք գրութիւն մը, որ ստորագրուած է Հմայեակ Արամեանցի կողմէ:

Գրութիւնը կը թուի գրուած ըլլալ մեր օրերուն, այսօրուան կացութիւնը նկարագրելով եւ մեր ամենէն հրապապ խնդիրներէն մէկուն՝ հայրենալքումի հարցը արծարծելով:

Չենք կրնար չմտաւորուիլ այս գրութեամբ, որովհետեւ թէեւ ճիշդ 109 տարիներ առաջ գրուած, սակայն կը հաստատէ այն իրողութիւնը, որ երբեք դաս չենք առած պատմութենէն, պարզապէս որովհետեւ մենք մեր պատմութիւնը լաւ չենք գիտեր:

Կարգ մը կէտեր մեր ուշադրութիւնը կը գրաւեն այս փոքրիկ գրութեան մէջ.

Ա. 1911 թուականին Արեւմտահայաստանը, որ երբեմն Տաճկահայաստան կը կոչուէր ընդհանրապէս արեւելահայերու կողմէ, տակաւին Հայաստան էր, միայն Հայաստան, առանց -արեւելա, -արեւմտ նախդիրներուն:

Բ. «Երկրին ճակատագիրը վարողները» միշտ ալ նոյն կեցուածքը ունեցեր են ժողովուրդին հանդէպ:

Գ. Ժողովուրդին կացութիւնը, հարիւր տարի ետք ալ նոյնն է՝ անգործութիւն, անբաւարար աշխատավարձ, օրէնքի բացակայութիւն, բայց մանաւանդ՝ Հայաստանէն դուրս աշխատանք փնտռելու երեւոյթ:

Դ. Աշխատավարձերու եւ շահագործումի նոյն այսօրուան կացութիւնը:

Ե. Եւ վերջապէս սրտցաւ յորդորը՝ «Մի՛ գաղթէք, որպէսզի Հայաստանը չմնայ առանց հայու» այսօր կը հնչէ նոյն ուժգնութեամբ, որքան հարիւր տարի առաջ:

Իր ամբողջութեանը մէջ կը ներկայացնենք այս գրութիւնը, զայն ձեր դատին յանձնելով:

Եթէ ստոյգ է թէ Լօպանֆ մը կ'երազէր ունենալ Հայաստանը՝ առանց հայու,

Եթէ ստոյգ է թէ Համիտ կ'ուզէր պահել Հայաստանը՝ առանց հայու,

Եթէ ստոյգ է թէ Կարմիր խաչը, այլապէս, այլազգի բայց համադաս Առանձնաշնորհեալներ կը վայելէն Հայաստանը առանց հայու,

Հայաստանէն դուրս տեղացող հայուն հոսանքը, կոչում ունի իրականացնել մէկուն երազը, միւսին ձգտումը եւ երրորդին վայելքը:

Բերութիւն մազ բուսաւ արտագաղթին ահռելի հետեւութիւններն հոլովելով եւ սակայն չարիքը կը շարունակէ մնալ չարիք: Ինչո՞ւ սակայն:

—Որովհետեւ չարիքը ծնցնող պատճառ-

ները կը մնան:

Յորչափ Հայաստանի մէջ հայուն տնտեսական վիճակը զայն կը պահէ վաշխառուներու ճանկին մէջ,

Յորչափ մանր վարկի հաստատութեանց, գործակցական ընկերութեանց ու գիւղատնտեսական եւ առտնին տնտեսութեան վերաբերեալ ժողովրդական նպատայարմար ձեռնարկներու չգոյութեան շնորհիւ, հայ աշխատաւորը պիտի ստիպուի դիմել վաշխառուին եւ այսպէսով մշտնջենական կախման դրութիւնը յարատեւ,

Յորչափ այս դժբախտ երկրին մէջ **վեր-կին** կոչմարի¹ պէս ծանրացած կը մնայ թշուառ հայ աշխատաւորութեան կուրծքին վրայ,

¹ Կոչմար = մղձաւանջ, վատ երազ.



Ցորչափ անուղղակի տուրքերը չեն ջնջուիր ի սպառ եւ կը մնան իրենց դարաւոր նուիրագործումին մէջ,

Ցորչափ ամէն կարգի տուրքերուն բաշխումը չի կատարուիր անմիջապէս ժողովուրդին տնօրինութեամբը, հիմ ընդունելով յառաջատուական (progresif) դրութիւնը,

Քանի որ արտադրութեան տնտեսական կերպերը, նահապետական տնտեսութիւնը, ինքնուրոյն արտադրութեան եղանակը անյեղի օրէնքին առջեւ տեղի կու տան աստիճանական զարգացմամբ, **գաբիդալիստ**ական արտադրութեան եղանակին,

Քանի որ հայ աշխատաւորը, իր ընտանիքը սովամահ չընելու համար, իր բազկին ոյժը գնողներու կամ շահագործողի կը կարօտի,

Քանի որ երկրին ճակատագիրը վարողները բնաւ փոյթ չեն տանիր ստեղծելու համար շինարար աշխատանք ժողովրդական աշխատաւոր լայն զանգուածին համար,

Քանի որ անգործներու ահագին լեզնները տեղական խիստ սահմանափակ աշխատանքներուն մէջ ալ կը հանդիպին բացարձակապէս անբաւարար աշխատավարձի եւ ամենաանխիղճ շահագործումներու, որոնց դէմ աշխատանքը պաշտպանելու համար որեւէ օրէնք գոյութիւն չունի,

Ապա ինչո՞ւ չմնայ չարիքը՝ չարիք:

Ապագան ...

Աւա՛ղ սակայն, այս երկրին ապագան ալ նոյնքան մռայլ է ու տխուր, որքան եւ ներկան, ըստ որում եւ ինքնին հասկանալի է թէ ... ապագան ալ մեծ բան մը չի խոտանար:

Ահա, ի միջի այլոց, այդ է պատճառը, որ Տաճկահայն իր բախտը կը փնտռէ Հայաստանէն դուրս:

Բայց շիտա՛կ է այդ ուղղութիւնը:

Ասիկա դարմա՞նն է վերջին:

Հասարակական չարիքները ո՞ր տեսնուած է որ փախուստով չեզոքացած ըլլան:

Մեր բարոյական եւ ֆիզիքական գոյութեան սպառնացող ամէն վտանգ կրնայ հեռանալ այն ատեն միայն, երբ մենք հայրենեաց կուրծքին պինդ կառչելով, անոր մէջ միայն ուռճանալու հաստատուն կամքով կը պատրաստենք, անտեղիտալի ինքնապշտպանութեամբ, վճռական պայքարը:

Ինքնամփոփումին ու յարաճուն կազմակերպութեան շնորհիւ միայն ձեռք պիտի առնուի այն փշոտ ճամբան, որ կը տանի ոչ թէ Հայաստանէն դուրս, այլ դէպի քաղաքական ու տնտեսական կատարեալ ազատութիւն:

Մեր վերջին խօսքը պիտի ըլլայ՝

-ՄԻ ԳԱՂԹԷՔ,

Որպէսզի Հայաստանը չմնայ առանց հայու:

ԱՆՏԻՊ ԳՈՐԾԵՐ ԿՈՄԻՏԱՍԷՆ

Անցնող տարուան վերջին ամիսներուն, հայրենի երգչուհի Յասմիկ Պապեանի ջանքերով հրատարակուած են Կոմիտաս Վարդապետի գերմաներէն ինը երգերուն եւ դաշնամուրային մէկ ստեղծագործութեան նօթաները:

Այս երգերը յօրինուած են Պերլին, Կոմիտաս Վարդապետի ուսանողութեան տարիներուն, Կէօթէի, Լենաուի, Ուլանտի եւ այլ բանաստեղծներու խօսքերով:

Երգերուն ձեռագիրները տրամադրած է Չարենցի անուան Գրականութեան եւ

Արուեստի Թանգարանի (ԳԱԹ) նախկին տնօրէն Հենրիկ Բախչինեան, նօթաները վերծանած է աւստրիացի երաժիշտ Մարթին Էվանց, իսկ Կոմիտասի թանգարանի տնօրէն Նիկոլայ Կոստանեան տրամադրած է Կոմիտաս Վարդապետի պերլինեան շրջանէն բարձրորակ լուսանկարներ:

Գրականագէտ Ալպէռ Մուշեղեան երգերուն գերմաներէն բառերը թարգմանած է հայերէնի:



ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԵՒ ՕՐԻՆԱԿԵԼԻ

Ջալալի մը ծնունդը միշտ ալ կ'ընկերանայ որոշ աւանդութիւններով, զորս կը փորձեն պահել ծնողքը, մանաւանդ մեծ ծնողները, որովհետեւ այդ աւանդութիւններուն մէջ կը տեսնեն իրենց տեսակին՝ ցեղին եւ ազգին շարունակականութիւնը:

Այս աւանդութիւնները տարբեր են աշխարհի տարբեր շրջաններուն մէջ: Անոնցմէ միայն մէկուն մասին կ'ուզենք խօսիլ այսօր, որովհետեւ հակառակ աւանդութիւն ըլլալուն, խիստ ժամանակակից եւ համաշխարհային հարցի մը լաւագոյն լուծումն է:

Երկրի մը մէջ, ուր միշտ ալ աղջիկներու ծնունդը դժգոհութիւն կը պատճառէ, Հնդկաստանի Բաճաստան շրջանի Փիփլանթի գիւղին մէջ երբ աղջիկ մը ծնի, գիւղին շուրջ 111 ծառեր կը ցանուին. այո՛, ճիշդ կը տեսնէք՝ հարիւրտասն եւ մէկ ծառ ...

Այս աւանդութիւնը համեմատաբար նոր է. զայն սկսողը նախկին գիւղապետ մըն է, որուն դուստրը մահացած է շատ փոքր տարիքին:

Եւ ամէն անգամ որ աղջիկ մը ծնի գիւղին մէջ, ապագային համար աւելի շատ ծառեր ցանուած կ'ըլլան, ապահովելով նաեւ ծառերու գոյութեամբ յառաջ եկած բոլոր յատկութիւնները:

Ծառերու կողքին իւրաքանչիւր ծնող աղջկայ համար 31,000 րուփ (500 ԱՄՆ տոլար) պահ կը դրուի դրամատան մէջ ծնողքին եւ բոլոր գիւղացիներուն կողմէ, որպէս նուէր: Քսան տարուան համար պահ դրուած գումարը կրնայ տարբեր նպատակներու ծառայել՝ ապահովել աղջկան անկախութիւնը, դրամօժիտ



հայթայթել ամուսնութեան պարագային – սովորութիւն մը որ տակաւին կը շարունակուի – ինչպէս եւ ուսումի համար օգտագործուիլ, եթէ նման ցանկութիւն ունենայ աղջիկը:

Ծառերուն հոգ տանելով եւս պէտք է զբաղիլ, բան մը որ կ'ապահովէ անընդհատ աւելցող բնակչութեան կարիքները, մանաւանդ երբ պտղատու ծառեր ցանուին:

Կարգ մը գիւղերու մէջ սկսած են այդ պտուղներէն նոր նիւթեր պատրաստել, ինչպէս ձեռքի եւ մարմնի քսուքներ, մագերու յարդարանքի կամ լուալու նիւթեր եւ այլն:

Պարզ թուացող սովորութիւն մը, որ արդէն աւանդութեան կարգ անցած է, կրնայ ոչ միայն նիւթապէս օգտակար դառնալ, այլ եւ նպաստել սեռերու միջեւ հաւասարութեան երկրի մը մէջ, ուր մինչեւ այսօր աղջկայ մը ծնունդը ծանր հոգ է ծնողքին համար:

Սքանչելի օրինակ, զոր կարելի է օգտագործել նաեւ մեր հայրենիքին մէջ, ուր աղջիկ զաւակներու սաղմը վիժելը թաքուն եւ պախարակելի սովորութիւն է դժբախտաբար:

